



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2353

891.9915

4-88

1433

68

2049 *Stenogramma*

391.919

2-88

18

890.35
[U] 30 MAY
1871

ԱՐԿԱԾՔ

ԱԶՆԻԻ-ՏՂԱՅԻՆ

ԵՒ

ԹՈՉՆՈՅՆ

ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ՎԷՊԸ



Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՐԳԱՐԵԱՆ

— 1871 —

2 .02. 2013

22022

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃԱՐՄԱՆ ԳՆԱՀԱՅՈՒՄԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՄԱՍԻՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

1998

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎՃԱՐՄԱՆ ԳՆԱՀԱՅՈՒՄԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ



ՎՃԱՐՄԱՆ ԳՆԱՀԱՅՈՒՄԻ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

— 1781 —

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃԱՐՄԱՆ ԳՆԱՀԱՅՈՒՄԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ

1102-862
2498-2011


Ա Ջ Դ

Սոյն հետաքրքրաշարժ ու գողտրիկ վէպն,
իւր Ա. տպագրութեամբ, օգտակար եղած
է Ս. զգայնոց՝ մանաւանդ իր լեզուին պար-
զութեամբն որ բազմաց առաջնորդ եղած է
Հայ լեզուաւ ուրիշ վէպեր ևս կարգալու՝
փոխանակ Աշխներու գրուածոց (զոր օրի-
նակ՝ Աշք Քէրէմ, Քէօռ օղլու ևն.), ու
րոնք բարբերն ապականելու միայն կը ծա-
ռայեն :

Ըստ մեզ, այսպիսի ժողովրդական վէ-
պեր այնպիսի ուղղութեամբ պատրաստուած
ինելու են որ ընթերցողին թէ՛ ճաշակ մը
տան և թէ՛ նոցա միաքն հետզհետե բարձ-
րացնելով, հասցնեն Շահէննի, Մօնթէ-
Քրիստոյի, Թշուառներու և Թափառական
Հրէի նման մատենից օգուտն քաղելու :

Այս տեսակէտով ահա նոյնութեամբ
կրկին անգամ կը տպագրեմք զայն, յուսալով
որ իւր նախորդին բաղդին կարծանանայ :

Կ. Պօլիս



ԱՐԿԱԾՔ

Ս. ԶՆԻԻ ՏՂԱՅԻՆ



Ով որ փորէ գուփ ընկերին
Նախ անկանի ինքն ի նմին

Ատենով շատ հարուստ անուանի ու պատուոյ տէր մարդ մը կար քաղաքի մը մէջ, որ գրեթէ արքայի նման շքեղութիւն, զարդարանք ունէր. այնքան ուժով համբաւը ելած էր, որ ամէնքը անոր կը ջանկային, մինչև թագաւորներն անգամ. բայց իր փառքէն աւելի այս մարդը մէկ հատիկ տղայ մ'ունէր, որ ան էր իր մեծ մխիթարութիւնը: Այս տղան ամեն խորին գիտութեանց ու հանճարաւոր ուսմանց տեղեակ էր, ասով ամեն մարդկանց յաւէտ գիտնոց սիրելի էր, ու արեգական նման կը փայլէր: Երբոր տասնըվեց տարեկան եղաւ. իր բնաւորութեանը մէջ կիրք մ'ունեցաւ որով կը հալէր ու կը մաշէր: Օր մը ճարը հատած մէկէն ի մէկ հօրը առջևը գնաց ոտքը ինկաւ ու լալով ըսաւ. ո՛հ հայր իմ, կուզեմ որ սրտիս ցաւը կորսնցունես, ինչու որ քաշե-

լու ու դիմանալու կարողութիւնս չմնաց. և
թէ որ ասանկ մնամ՝ շատ չք քշեր կը մեռ-
նիմ: Հայրը հարցուց թէ՛ ի՛նչ է ցաւդ կամ
ի՛նչ կուզես. եթէ կարելի բան է կատա-
րեմ: Արդին ըսաւ՝ լսեր եմ որ՝ Աստուած
աշխարհիս մէջ մարդս շուխտ շուխտ է ստեղ-
ծեր, ինչպէս հասակով դէմքով ամենայն
կերպով իրարու նման. հիմայ իմ ունեցած
ցաւս այս է որ՝ քեզի պիտի ըսեմ. դիշեր
ու ցորէկ աչքս քուն չկայ. աւաղ կը կան-
չեմ որ իմ զոյգս դտնամ, անոր հետ միշտ
կենամ, անով կենցաղավարիմ, որ ան ըլլայ
իմ ցաւս փարատող ու դիս մխիթարող,
այս է ցաւս: Կուզեմ որ իշխանական վի-
ճակներդ շուտ մը հրովարտակ հանես, որ
փնտուեն դտնան իմ նմանս ու ինձ բերեն
որ սրտիս ուրախութիւն ու ցնծութիւն ըլ-
լայ: Եւ աշխարհիս մէջ ալ ուրիշ բանի չեմ
փափաքիր՝ միայն իմ նմանս ուր կը շրջի
ըսելով կուլամ. ասով փորս կրակ լեց-
ուածի պէս կերիմ ու կը տոչորիմ: Հայրը
մխիթարելով ըսաւ. շատ աղէկ արդի դու
հոգ մի ըներ. ու շուտով մունետիկներ հա-
նեց բոլոր քաղաքները և շրջակայ գիւղերը՝
որ իր որդւոյն նմանը դտնեն:

Եսա օր անցաւ վրան՝ ու շատ տեղ փըն-
տըռեցին. ամենեին նմանը չգտան: Տղան որ
խմացաւ՝ աչքը արտասուք, սիրտը արիւն,
անձը ցաւօք լցուած ու կրակ կտրած ան-
մարելի բոցով գիշեր ցերեկ օ՛ֆ, ո՛ւֆ ընե-
լով « ֆէլէկին քէօրիւկը կը քաշէր »:

Օր մը լսեց թէ՛ Պօլիս գերի ծախողներ
կան, որոնք դուրսերէն շատ ծառաներ կը
բերեն. կարելի է որ անոնց քով գտնուի ը-
սելով՝ հօրմէն հրաման ուղեց որ զինքը շատ
ոսկիներով Ա. Պօլիս խրկէ: Հայրը տեսաւ
որ բանը բանէն կանցնի, թէ չխրկէ տղան
ձեռքէն կելլէ. անոր համար 3 ծառայ և
3 հազար քէսէ ստակ տալով տղան ճամբայ
դրաւ: Տղան երբոր Աղեքսանդրիա (Նսկէն-
տէր) հասաւ, նաւ բռնեց ու ծառաները գըլ-
խէն արձակեց. և յաջողակ հողմով 10 կամ
11 օրը Աստուծոյ օգնութեամբը հասաւ Ա.
Պօլիս. նաւէն հանեց իր ունեցածը, ու գնաց
գերավաճառներուն շուկային քով սենեակ
մը բռնեց. մէկ քանի օրէն գնաց իր քովը
եղած սրճանոցը. և հոն նստած կը մտածեր
թէ ի՛նչ ձևով գերեվաճառներուն քով եր-
թայ հարցնէ: Այս մտածութեամբ երբ կը
խորհէր սրճանոցին մէջ, ուր մէկ քանի գերի

ծախսողներ կային, տեսան որ մէկ ազնուազարմ և գեղեցիկ տղայ մը կը մտածէր, հարցուցին տղային թէ՛ ցաւդ ի՞նչ է, ո՞ւր կից կուգաս, ո՞ր երկրացի ես, ի՞նչ բանի համար եկած ես, վաճառական ես, թէ ուրիշ բանի կը հետեւիս: Տղան ըսաւ. ես թագաւորական ցեղէ եմ, ու իմ տրամաւ թեանս փարատութիւն գտնալու պատճառաւ ես զիս այս երկիրները ձգեցի. և ցաւս այս է որ ինձ նման մէկ գերի մը կուզեմ, բայց այնքան պիտի համեմատ ըլլայ՝ որուն խօսքը, նայուածքը, քալուածքը, դիտութիւնը ամեն կերպով ինձ նմանի. եթէ գտնամ աւելի զին տալով՝ ծախու կառնեմ. ահա այս բանիս համար եկեր եմ այս երկիրը. թէ որ ձեր քովը կայ՝ առնող վաճառականն ես եմ: Երբոր լսեցին ասոնք մէկմէկու երես նայելով կը մտածէին թէ որո՞ւ քով կը գտնուի. այս մտածութեանը վրայ անդիէն մէկ ծերունի գերածախ մը եկաւ արճանոցէն ներս մտաւ, ողջունեց ու նստաւ. անոր յայտնեցին տղուն միտքը՝ ան ալ ըսաւ. իմ քովս տղայ մը կայ իսկ և իսկ քեզ կը նմանի. եթէ կամք կընես, բերեմ և երկու օր ալ քովդ պահէ, տես

ի նշապէս համեմատ է . քեզ եթէ մէկը տես-
նայ բնաւ չկրնար որոշել ձեզ մէկզմէկէ :
Աս որ լսեց տղան ո՛հ հայրիկ շորհ ըրէ
ժամ մը յառաջ բեր որ տեսնամ : Օերու-
նին գնաց տղան առաւ բերաւ . երբոր ազ-
նուական տղան տեսաւ որ յիրաւի իրեն կը
նմանի , անանկ է նէ հայրիկ երկու օր քովս
թող կենայ ըսաւ որ ամեն կերպով փոր-
ձեմ ինձ նմանութիւն ունի՞ մի : Տեսաւ որ
իսկ և իսկ կը նմանի այնքան սէր կապեց
գերիին հետ որ մինչև անգամ հայրը մայրը
և իր հօրը ունեցած հարստութիւնները
հասկցուց , ու փառք տալով Աստուծոյ կու-
րախանար . և քանի գերիին երեսը կը նա-
յէր հայլի մէջ նայած կըլլար : Աերջապէս
երկու օրէն ետքը ծերունի գերածախին
քովը գնաց ու գինը կտրելով ստակը վճա-
րեց , բէնճիկը ու գերի տղան առաւ իրեն
սենեակը դարձաւ . քանի մ' օրէն նաւը մը-
տաւ որովհետև հոն կապասէր . ու յաջողակ
հողմով Սաղըզի առջևը հասան . ան տեղը
հովը կտրեցաւ ու իրենք ալ չկրցան յառաջ
երթալ : Ուստի խնդրեց տղան նաւավարէն
որ գինքը քիչ մը դուրս հանեն որ երթայ
պարտէզները պարտի . երբոր կզրօնուցը

հոգնեցաւ տղան ու ծառի մը տակ նստե-
լով քունը եկաւ, ու գերի տղային պատ-
ուիրեց որ սպասէ. և երկու ժամէն ետքը
արթընցունէ որ նաւը երթանք. — շատ ա-
ղէկ, ըսաւ գերին, ու տղան քնացաւ. հովը
անուշ անուշ կը փչէր՝ ծառոց տերեւերուն
շարժմունքը՝ քնոյն օգնելով մինչև կէս գի-
շեր քնացաւ. յանկարծ աչքը բացաւ ան-
սաւ որ գիշեր է եղեր, գերին ըսաւ. —
ո՛ւր ես, — հոս եմ կըսէր. — հասաւ ինչո՞ւ
ինձ ձայն չտուիր, որ այսքան ժամանակ հոս
մնացինք ըսելուն չմնաց, յանկարծ գերի
տղան վրան ցաթկեց թուրը ճիտը գրաւ ու
կուզէր որ իր բարերար տէրը սպաննէ, ա-
ման ըսաւ ազնիւ տղան, ի՛նչ կընես, գերին
ըսաւ ի՛նչ պիտի ընեմ, քեզ հիմա պիտի
սպաննեմ. ու երթամ ժառանգութիւնդ
վայելեմ: Շատ աղաչանք շատ պաղատանք
ստակ չըրաւ. դեռ չսպաննած՝ տղան ըսաւ
արտասուալից աչօք, մի՛ սպաններ քեզի բան
մ'ըսեմ, որ դուն ալ կը հաճիս, կանկ ա-
ռաւ. ու ըսաւ խօսէ նայիմ. շնորհ ըրէ ու
իմ աղաչանքս ընդունէ ըսաւ. « որովհետեւ
երկուքս ալ մէկ ենք մեզ տեսնողը չկրնար
որոշել, որս գերի ենք և որերնիս տէր, թէ

որ զիս սպաննես ի՛նչ վարձք կըլլայ քեզ .
եկու ես հրամանոցդ ծառայ ըլլամ, դու
ալ ինձի տէր. ես քեզի ծառայեմ մինչեւ ի
մահ » :

Աս որ լսեց գերին ախորժեցաւ. է՛յ ը-
սաւ, բէնճիկս տո՛ւր ու լաթերդ հանէ որ
ես հագնիմ. երդում ու դաշինկ դի՛ր որ
մարդու չյայտնես իմ գերի ըլլալս, և խոս-
տովանիս թէ գերին դու ես : Աս խօսա-
մունքներուս կը հաճիս նէ՛ գքեզ չեմ սպան-
ներ, թէ չէ՛ կեանքդ ձեռքս է . հաճեցաւ
տղան՝ ու հանեց բէնճիկը տուաւ, իր լա-
թերը հանեց հագցուց գերին, և ամեն
ծառանդութիւններն ալ տուաւ, և երդում
ալ ըրաւ որ մինչև մեռնիմ, մեր գաղտնիքը
մէկու մը չիմացունեմ. բայց մեռնելէս ետ-
քը երդումէս ազատ մնամ ըսելով մահուը-
նէ ազատեցաւ. հիմայ գերի տղան եղաւ
տէր, և ազնուական տղան գերի լաթեր
հագնելով եղաւ ծառայ ու գերի : Աս կեր-
պարանքով ելան երկուքը գիշերով նաւը
մտան, ու յաջողակ հողմով գէպի Իսկէն-
տէր կը մօտենային ՆաւաՎարները չկրցան
գուշակել այս փոփոխութիւններէն. որով
հետև տարբերութիւն չունէին : Աերջապէս


հասան ասոնք 5-6 օրէն Իսկէնտէրի նաւա-
հանգիստը՝ ու նաւէն ելլալով ճամբայ ին-
կան ու գային ազնիւ տղուն քաղաքը :
Բայց դու տես աս անօրէն գերիին ըրա-
ծը, որ իր ազնիւ տէրը ծառայի նման
ետին ձգած ամբարտաւան խօսքերով « ծո՛-
շան որդի » և այլ ուրիշ նախատանաց խօս-
քերով սիրտը կը ծակէր, ըրէ՛, մընէր, դի՛ր
վերցո՛ւր ըսելով : Իսկ ազնիւ տղան ամե-
նայն հնազանդութեամբ իր գերիին հրամա-
նը կը կատարէր, ու գաղտուկ կուլար իր
անբախտութեանը վրայ, որ ինքը իր նմա-
նին ցանկալով այնչափ աշխատանք կրեց
դրամ խարճեց իր հայրենական երկիրներէն
զատուեցաւ ուզածը գտաւ բայց անիկա փո-
խան շնորհակալութեան իր տէրը գերի ը-
րած կը ծառայեցնէր, ու փառք տալով իր
գաղտնիքը կը պահէր : Աերջապէս հասան ի-
րենց քաղաքը . գերին իբր հարազատ որ-
դի աւետիս կը խրկէ հօրը թէ՛ զաւակդ ի-
րեն նմանը գտած կուգայ : Հայրը աս որ
լսեց անթիւ բազմութեամբ ձիեր կառքեր
պատրաստեց, ու գնաց փառաւոր ցնծու-
թեամբ գիմաւորեց իր սիրելի և միածին
տղան, և երբ տեսաւ իբր որդւոյն վիզը

փաթթուած կը համբուրէր ու կարօտու-
թիւնը կառնէր, չէր գիտեր թէ իր որդին
չէ: Ազնիւ տղան իր իսկական հայրը տես-
նալով կուլար կողբար ծածուկ, բայց ինչ
օգուտ, հայրը գերին յափշտակեց՝ ինքը
մնաց բացը, ու մեծ փառքով մտան պաշա-
տէն ներս և հայրը շուտ մը բոլոր քաղաքնե-
րուն ու գիւղերուն մարդոցը հրաւէր կար-
գաց, որ գան իր զաւկին համար պատրաս-
տուած խնջոյքը վայելեն. նստեր էին այս
զարդարուն սեղանը, նախ՝ հայրը ու իբր
որդին (գերին), մայրը, քոյրերը և ուրիշ
բազմականներ ուրախութեամբ կուտէին կը
խմէին. գերին ալ առաջուց ճանչցողի պէս
գինքը ամենուն ծանօթ կուտար: (Ինչու որ
ազնիւ տղայէն սովբեր էր) որոնք անկաս-
կած իրենց զաւակը գիտէին: Չգիտէին խեղ-
ճերը որ իրենց զաւակը գիմացնին բարև
բռնած կսպասէ. հայրը հարցուց թէ՛ ո՛վ
որդի, Աստուած խնդիրքդ կատարեր է
ինչպէս իսկ քեզ կը նմանի գտած գերիդ,
թէ որ զքեզ չտեսնեմ գիտեմ թէ նա է
որդիս: Աստուած անփորձ պահէ զքեզ և
քու ծառայդ: Մինչ այս խօսքերով կը զուար-
ճանային, յանկարծ գերիին սիրտը լեմօն

ուղեց . վասն որոյ ըսաւ հօրը՝ ո՛հ հայրիկ ,
 քիչ կըլլար որ ինձ լեմօն մը տայիր : Հայրը
 ըսաւ ո՛վ որդի՛ դու գիտես որ մեր քա-
 դաքք լեմօն չաս կար , բայց այս 3 ամսուան
 մէջ վիշապ մը գոյացաւ որ մարդ չկրնար
 երթալ , թէ որ հնար ըլլայ բերդին 100
 ոսկի կուտայի : Աս խօսքը գերին լեւոնե
 պէս դարձաւ որպէս թէ իր հօրը ըսաւ ,
 հայր՝ ես ինչո՞ւ ելայ Ստամբուլ գայի այս
 գերին գասայ ինձ նման . այս անգամ խե-
 լացի ու ինաստան հնարադէտ է , որ ալ
 չկրնար ըլլալ : Ես հիմա հրաման կընեմ , որ
 երթայ այն վիշապը ապանել ու ինձ մէկ
 քանի լեմօն բերէ : Ազնիւ աղան առ հրա-
 մանք որ շեյ՝ խեղցն ինացաւ որ գերին
 իրեն համար գուք կը փորէ մեռցնելու , ոտքը
 ինկաւ գերին ու կրակը անան անք , այդ-
 առ աջարկաթիւնը ինձ մը ընէր , թէ որ եր-
 թամ՝ վիշապը ինձ ողջ ողջ կը կրէ :

Չերին կատարէր թէ անպատեհաւ ափաթի
 երթաւ այս խեղցը կատարեւ , և թէ որ
 չերթաւ՝ հիմա հոս ապանեմէ՛լ կուտամ : Բա-
 լար բաղնիկանք ու ծնոքք աղակցին որ
 շարկէ առայդ ու խեղճ աղան , զրոյս որ
 կրակին վիշապին ժամեացք կերակուր ըլլայ :

Մտիկ չըրաւ ձի քաշել տուաւ որ նստի ու
չուտ մը երթայ բերէ, հրամանսին դէմ չկե-
նայ:



ԱԶՆԻԻ ՏՂԱՅԻՆ

ԱՌԱՋԻՆ ՃԱՆԱԳԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆԸ

Ե Ի

Գ Ի Պ Ա Ի Ա Ծ Ը



Իսկ արդ, քեզի կրտսմ ով մտիկ ընող
խելքդ ինձ տա՛ր աւ տե՛ս, թէ աս ազնիւ
ազանս իր ձեռքովք եր դիտուն ինչ փորձանք
քերաւ: Երբոր ձի քաշեցին որ հեծնայ եր-
թայ, դեռ չի հեծած երեսը հարին դրաւ,
արատաւք թափելով Աստուծոյ կաղաչէր
որ իր անձեղութեանը ողորակելով զինքը ման-
կահասակ կեանքով դազաններուն աւ փի-
չապներուն կերակուր չի տայ:


Ղերջապէս զինքը Աստուծոյ յանձնելով
հեծաւ ձին աւ լայով կերթար: ոչ ճակքայ
դիտելք և ոչ տեղ: ձին ուր որ տանէր հոն
կերթար, խելքը անասկ անհնետն ասանկ
տեղեր գաջած չէր: Ասանկ երկիրդիւ աւ
դազապով զնայածի նման լեռներք կը պար-

տէր ու ասդիս անդին կընայէր, որ վիշա-
պը չելլայ զինքը ուտէ. ինչպէս եղաւ տե-
սաւ որ ասաւոր մարդ մը ճերմակ մորուօք
կեցեր անդադար դէպի ազնիւ տղուն կը
նայէր: Երբոր տեսաւ ուրախութենէն ար-
դեօք լա՛յ, թէ խնդայ, ապուշ խօսքով մը
հարցուց, ով հայր պատուական ի՛նչ կը
նայիս այս խղճալիիս. ո՛հ ինձ մէկ ճարիկ
մը գտիր, որ մահուանէ ազատիմ:

Ահարկու ծերունին պատասխան տուաւ
թէ, որդի՛ իմ՝ քու խելքդ չի հասնելով ձեռ-
քովդ շարիք գտար երդմնազանց մի՛ ըլլար,
Աստուծոյ ողորմութիւնը շատ է, համբերէ
Աստուած քեզի կազատէ. ազնիւ տղան
երբ լսեց զարմացաւ թէ՛ ի՛նչպէս ծածուկ
բանը գիտցաւ ասաւոր ծերունին. վասն ո-
րոյ՝ ասիկայ պօշ մարդ չէ ըսելով, կըսէր.
ո՛վ հայր՝ իմ աղաս զիս լեմօնի խրկեց այս
կողմերը՝ իսկ վիշապ մ՛ըլլալուն պատճառաւ
վախուս ոչ առաջ կընամ երթալ, և ոչ ետ.
առջիս գաղանաց ժանեաց սուրը, ետես
երկթէ՛ սուրը. երկու մահուան մէջ տեղն
եմ մնացեր ըստ առածին թէ « իբի գըլըճ
արասընտա գալմըշըմ »: Ահաւոր ծերունին
ըսաւ, որդի, ես ամեն բանիդ տեղեակ եմ,

ինչ ըսեմ քեզի, ուստի ես այլ քեզ մեզ
 քրնա ըլ օժանդակելու և օգնելու եկայ
 վերջը եկուր հետս ըսաւ՝ և գային լերան
 մը տակ. հեռուէն տղան տեսաւ որ լեմօնի
 պարտէզը կերևնար և ամեն մէկը սեխի չափ
 խոշոր. բայց տղան առաջ երթալու կը վախ
 նար վիշապին երկիւղէն, ծերունին քաջա
 լերեց ու ըսաւ, Աստուած քեզ օգնական
 կարդա՛, երբ մօտեցան՝ ծերունին ծոցէն
 կըտր խմորէ շափղած բան մը հանեց. առաւ
 տղուն ու ըսաւ, քիչ մ'այլ առաջ երթա
 վիշապը պառկած կը տեսնես, մի վախ
 նար, գնա վրան ձայն տուր և երբ ելլէ՝
 ձեռքդ բերանը հասցուր և այս խմորեղէնը
 տուր որ կըլլէ, և դուն անցիր գնա՛ քու
 գործդ տե՛ս ու դարձիր ինձ: Տղան առաւ
 խմորեղէնը ձին յառաջ քշեց տեսաւ որ
 փոքր փշուրի մը չափ բան մը պառկած այն
 պէս կը Քրչար որ, գեանի փոշիները ու
 ծառոց տերևները քիթէն կը մանապին ու
 կելլէին. սիրտը ամուր բռնելով տղան գնաց
 քովը տեսաւ որ միադ լի գաղանձ էր ծոցին
 տուաւ. վասն զի բերանը բաց էր, ձգեց
 ներս խմորեղէնը ու ինչը ծառի մը վրայ ե
 լաւ: Վիշապը կը լի գաղանձ պատուե.

2079
 55-56



ցաւ, առ որ տեսաւ տղան փառք տուաւ
Սատուծոյ և հանդարտ սրտով լեմօններէն
տատը հատ ժողովեց, հեծաւ ձին, ու ան
տեղ եկաւ, ուր որ ծերունին տեսաւ. շատ
փնտռեց չգտաւ, իմացաւ այն ատեն՝ որ
Սատուծոյ ողորմութիւնը հասեր է, ու շնոր-
հակալ ըլլալով Սատուծոյ, գնաց իր պա-
լատը. և լեմօնները ամբողջ ծառային առ-
ջին դրաւ, ու ծառայական խոնարհութիւն-
ներ ցցունելէն վերջը՝ վիշապին սատակմանն
ալ աւետիար տուաւ: Երբ լսեցին աս բանս
քաղաքացիք և գիւղացիք՝ գովեցին ազնիւ
տղային կտրիճութիւնը և ուրախութեամբ
լեմօնի պարտեղները գացին. բայց գերին
որ տղայ էր եղեր՝ տեսաւ որ յոյսը ունայն
ելաւ. թէպէտ շատ պատիւ ըրաւ առ երեսս,
սակայն սրտով կուզէր որ հետքը վերցնէ,
իսկ ազնիւ տղուն քաշածները բանի տեղ
չդնելով՝ բոլորով սրտիւ ծառայութիւն կը-
նէր: Սակէց ի դատ ամէն օր որս բռնելու
կերթար. երբոր փափուկ չորքոտանի և թըռ-
չուն բռնելու ըլլար շուտ մը կը բերէր կը
խորովէր և անուշահամ կերակուրներ շի-
նած կը պատուէր զգերին. օր մ'ալ աս
ազնիւ տղան երբոր լեռները կը պտըտէր,

տեսաւ որ բան մը կը փայլի լեւանը վրայ՝
որ արեգական նման բոլորտիքը ճառագայթ
կարճակէր, քովը գնաց տեսաւ որ աննման
գունով զարդարուած թռչնոյ փետուր մ'է,
չուտ մ'առաւ գետնէն և շիտակ գերիին
տանելով իբր թագաւորական պատիւ ըն-
ծայ կը մատուցանէր, որուն վրայ շատ ու-
րախացաւ տէրը, թէ աս ինչ գեղեցիկ փե-
տուր է. յետոյ աւելցուց ըսաւ որ՝ հապա
ո՞րչափ գեղեցիկ պիտի ըլլայ թռչունը,
գուն որ այս փետուրը բերիր, կարող ես
թռչունն ալ բերել և ահա քեզի եօթը օր
և եօթը գիշեր միջոց կուտամ, թէ որ չբե-
րես՝ իմ գլխուս վրայ կերդուիմ որ սպան-
նեմ քեզ. բայց հայրը և ուրիշները կատի-
պէին թէ՛ մի՛ ըներ այդ գծուար առաջար-
կութիւնը. աս որ լսեց գերին բարկանալով
կրակ կտրեցաւ, անպատճառ պիտի գտնայ
ըսելով հրաման ըրաւ որ ձի քաշեն. որպէս
զի հեծնայ ու փնտուելու երթայ:

— —

ԵՐԿՐՈՐԴ ԴԻՊՈՒԱԾԸ

Ազնիւ տղան այս պատուէրը որ լսեց,
զարմացաւ ու արիւնը երակներուն մէջ պա-
ղեցաւ, կըսէր թէ՛ ո՞ւր երթամ, ինչ ընեմ,

որ լեռները պտըտիմ, կամ որ ձորերուն
մէջ իմ ցաւիս ճարը դանամ կըսէր ու կու-
լար . շատ զղջաց փետուրը տանելուն վրայ .
բայց ինչ օգուտ, այսպէս սկսաւ մէկ օր
մէկ գիշեր պտըտիլ, բայց բան մը չգտաւ .
որովհետեւ շատ հոգնած էր . ձին կապեց
ու ինքն ալ սկսաւ քնանալ . մինչդեռ կը
քնանար, յանկարծ տեսաւ որ առաջին գիւղ-
ուածին պատահող ահաւոր ծերունին գի-
մայը ելաւ՝ ու կուղէր որ սպաննէ . պատ-
ճառը կը հարցնէր ազնիւ տղան թէ՛ յան-
ցանքս ի՞նչ է, վասն սիրոյն Աստուծոյ մի
սպաննե՛ր . իմ սիրտս արիւնով լցուած ա-
տանկ խեղճ կը պտըտիմ . և չէր գիտեր թէ
իր աղատման պատճառ եղող ծերունին է .
այն ատեն ըսաւ ծերունին, ես քեզ չսպան-
նեմ՝ ո՞վ սպաննեմ, որ դուն գլխուդ կա-
մովին ցաւե՞ր կը բերես : Աս խօսքը որ լսեց
տղան, լալով ոտքը ինկաւ ու կըսէր, «Ենորհ
ըրէ տէր իմ՝ այս մէկ յանցանքս ալ, ներէ
մէկ մ'ալ ասանկ բան չեմ ըներ . Աստու-
ծոյ սիրուն աս վտանգէն ալ աղատէ զիս» .
ահաւոր ծերունին դուրսը վերատին շարժե-
լով տղուն վրայ, ո՞վ որդի ըսաւ . չե՞ս մի
գիտեր որ գերիդ սպաննել կուղէ քեզ, ինչ


չուղ պէտք է որ փետուր տարիք անոր .
ազնիւ տղան կաղաչէր որ թռչնոյն տեղը
ըսէ. ծերունին պատասխանեց թէ՛ այն թռու-
չունը բռնելը հնար չէ, որովհետև երկնքի
կամարին մէջն է բնակարանը, բայց տղուն
վրայ գլխաւով ըսաւ. կերթաս գերիէդ 7
ուղտի բեռ կորեկ (տարր) կառնես կուգաս .
այն կորեկները աս պառկած տեղդ կը պար-
պեա, դուն ալ կորեկին տակը կը պահուր-
տիս. ես հրաման կուտամ որ ամեն ցեղ
թռչունները վրայդ դառն, ու մէկ մէկ կորեկ
առնեն երթան, և կըլլայ որ ան թռչունն
ալ դայ, եկած ժամանակը ձեռքդ վրան
երկնցնես առանց ձայնի, և երբոր փախչիլ
ուղէ՛ կըսես. « Եօյ նասհասպետին աղաւնին,
որ քեզ նառէն թռուց քեզի կերակուր կու-
տամ » աս խօսքը լսելով թռչունը քեզի հնա-
զանդ կըլլայ. բանը որ հոստեղը հասաւ,
ծերունին խթեց տղային կողն ու արթնցուց,
տղան տեսաւ որ ձին ոտքին տակը կանգ-
նած է, ու ալ մարդ չիկար քովը, զարմա-
ցած փառք կուտար Աստուծոյ. ու ելաւ
հեծաւ ձին, դնաց կորեկը բեռցուց 7 ուղ-
տի վրայ՝ ու երկու օրէն բերաւ պառկած
տեղը լեռան պէս դիզեց, ինք ալ ներքեր

մտաւ . հիմա թռչունները կուգային կատ-
նէին մէյակէ կորեկ՝ ու կերթային . եղաւ
որ ան թռչունն ալ եկաւ ու կորեկ մ'առած
կը փախչէր , աղան ձեռքը վրան երկնացուց ,
որ բռնէ . թռչունը խրտեցաւ . այն ատեն
տղան անուշ ձայնով ըսաւ . « Եկո՛ւ մի եր-
թար գեղեցիկ թռչուն , Նոյ նահապետին
նաւուն աղանին քեզի կերակուր պահեր
եմ » : Աս խօսքը որ լսեց թռչունը՝ փրով
գարձաւ աղնիւ տղային ձեռքը և զինքը ա-
նոր յանձնեց , երբոր բռնեց թռչունը մեծ
ուրախութիւնով տարաւ իր գերիին՝ և խո-
նարհութեամբ ընծայեց , որով աղատեցաւ
երկրորդ անգամ մեռնելէն : Երբոր տեսաւ
տղան զարմացաւ ու պաղեցաւ մնաց , որ
ինչպէս գայեր գտեր , ու բերեր է , ու ափ
ինքն ալ ամաչելոյն շնորհակալ եղաւ բոլոր
աղնուականաց առջին և գոհ կըլլար Ա.ա-
տուծոյ ու կըսէր . « Փառք Ա.ատուծոյ որ
աշխատեցայ Ա. Պօխ գայի այս գերիս գը-
տայ » տեսա՞ք ինչպէս հրամաններս կը կա-
տարէ . և այլն : Բայց ներսէն կրակը զինքը
առեր էր թէ , ի՞նչպէս ընէ ու ձեով մը
տղան սպաննէ . վասնորոյ գիշեր ցորեկ չա-
րութիւն մտածելու հետ էր ու բնաւ մէկ
հնար չէր կրնար գտնել :

Օր մը դայեակը կը հարցնէր առանձին
թէ՛ ո՛վ տէր, ինչո՞ւ օրէ օր կը հաշիս ու
կը մաշիս. հարկաւ ցաւ մ'ունիս յայտնէ
ինձ. ես Աստուծով օգնականս ու փարատիչ
կըլլամ: Քերին ըսաւ. ո՛վ մայր, ես կու-
ղեմ որ գերիս սպաննեմ. երկու մահառիթ
առաջարկութիւններ ընելով՝ խրկեցի, բայց
անվտանգ կատարեց. և թէ որ ասոր մահ-
ուանը ճարը գտնանէ քեզ անհամար բա-
րութիւնով կը հարստացնեմ: Դայեակն ը-
սաւ. աստ ալ բան մըն է. Թաժկաթ քա-
ղաքը կը խրկես տղան, աւ կըսես որ անտե-
ղի թագաւորին աղջիկը որն որ շատ իմաս-
տուն է, անոր հետ կը փորձուիս ու իմաս-
տութեամբ կը յաղթես, նշան մ'ալ կառ-
նես անկէց կը բերես որ հաւատամ յաղ-
թելդ: Եւ երբոր տղան հոն հասնի, ան-
պատճառ կը մեռնի: Ասանկ մտածութեամբ
օր մը երբոր բոլոր խորհրդականներով ու-
րախութիւն ընելու ատեն՝ յանկարծ բարձր
ձայնով կանչեց ու ըսաւ. « Ծօ՛ գիտե՛ս ես
քեզ ինչո՞ւ բերի, միայն թէ իմ համբաւս
բոլոր աշխարհ տարածես որ բոլոր լաղճ
ղիս երանեն. հիմայ պիտի ելլիմ աս Թաժկաթ
քաղաքը որ անառիկ է, ու թագաւորն ալ

անբաւ հարուստ, ուրկէց ամեն թագաւոր-
ներ կը գողանն. լսեր եմ որ անոր աղջիկը
անհամեմատ գեղեցկութիւն ունի եղեր,
կուզեմ որ այն աղջկան խնաստութիւնը
փորձես ու յաղթես, ու յաղթութեանդ
մէջ նշանն ալ առնես ու իմ անուանս պար-
ծանք բերես. և եթէ հրամանս կատարես,
ալ գընդ գերութենէդ կաղատեմ, և շատ
փառօք պատուելով ու բազում հարստու-
թեամբ հանգիստ կեանք կը շնորհեմ ևն.» :
Արտիճեան անշիւ տղան կամօքը և երդմամբ
գերութիւնը յանձն առեր էր. կը մտածէր՝
թէ որ դէմ կենամ, եողմնաղանց կըլլամ
ու մեղաց մէջ կիյնամ: Աւտի այս մտա-
ծութեամբ յանձնառու եղաւ որ երթայ
յաղթէ, և այս ալ բաւ. թէ Աստուած
կամենայ գուցէ աղջիկն ալ կը բերեմ, և
հրամանոցդ օրինաւոր հարանիքը կը տես-
նեմ. ախորժեցաւ գերին աս խօսքին և կա-
պեց անշիւ տղային մախաղը 10 հազար
քաակի ոսկի, և սաստիկ հրաման քրաւ որ
շուտով երթայ՝ և յատկապէս այսքան շատ
դրամ կուտայ, որ ճամբուն վրայ գողերը
սպաննեն, բայց Աստուած տղային անմե-
ղութեանը խնայելով կողորմէր ու գործը

կը յաջողէր : Աղնիւ տղան յԱստուած յուսալով որ իր հօրը կարօտութիւնը իր սիրտը չթողու, և գործին յաջողութիւն տալով իրեն օգնութեան համեղու համար Աստուծոյ կաղաչէր . ու ծածուկ, ծնողայր ու ազգականներուն նայելով կուլար : Ար և մնաք բարեաւ ըսելով հրաժարական ողջոյնը տրւաւ . Աստուած վերատին իրար տեսնելու արժանի ընէ ըսելով ձին հեծաւ, և որովհետեւ ճանապարհ ալ չէր գիտեր՝ վասնորոյ արցուք թափելով և ողբալով կուլար ու կերթար :



ԱՋՆԻԻ ՏՂԱՅԻՆ

ԱՌԱՋԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆԸ

Ե Ի

ԵՐՐՈՐԴ ԴԻՊՈՒԱԾԸ

—

Տղան ասանկ խեղճութեամբ լեռները ինկած կերթար, Աստուծոյ տնօրէնութեամբ ո՛չ դաղանի և ո՛չ թշնամեաց իսկ պատահեցաւ . երբ մէկ ամսուան ճանապարհ հեռացաւ՝ հեռուէն տեսաւ իրիկուան մը ժամանակ որ երկու մանր առիւծի ձագեր ձորի

մը եղերք նստած էին . ձին քչեց նայեցաւ
որ հոր էր առջիւր, հորին երկու կողմերը
նստեր էին ձաղերը . լսեց որ հորին մէջէն
թոքախտէն հիւժած մարդու ձայնի նման
բարակ տքալու ձայն կուգար . ձիէն վար
իջաւ դնաց հորին բերնին մօտեցաւ , տե-
սաւ որ մէջը դ լխուն վրայ տնկուած մարդ
մը կայ ու երկու աչքը կոյր կը տքար , ըրաւ
չքաւ հորէն վեր հանեց , և կը հարցնէր
թէ՛ ի՞նչ մարդ ես . աս ի՞նչ բան է . մարդ
դը մէյմը ի խորոց սրտէ հառաչելէն ետքը՝
որ գիտեա թէ գետինը կը դողացնէր , ու
սկսաւ պատմել դ լխին եկած դիպուածը :

Գ Բ Ն Ե Յ Ի Ի Ն

ԴԻՊՈՒՍԾԸ

Եկու հիմայ աս Գրնեցիին դիպուածը
մտիկ ըրէ , որ զարմանաս . աս կոյրը երբ
նստաւ ազնիւ տղուն դիմացը , ազաչեց որ
քիչ մ'ուտելու բան տայ , որպէս զի կարող
ըլլայ իր պատմութիւնը պատմել : Ազնիւ
տղան քիչ մը հաց տուաւ որ կերաւ , ու
պատմութիւնը սկսաւ : Ով եղբայր , ծառագ
թագաւորի որդի է . հայրս պատուիրած էր
դայեկներուն որ երբոր աղջիկ զաւակ ծնի՝

մեռցնեն , ու այսպէս որքան աղջիկ զաւակ
կը ծնէր՝ կը մեռցնէին , որով բնաւ աղջիկ
զաւակ չունէր . և ես կը ցանկայի որ մէկ
քոյր մ'ունենամ : Օր մը տեսայ որ մայրս
յդի է՝ դայի հօրս ոտքը ինկայ աղաչեցի
թէ՛ ո՛վ հայր՝ մայրս թէ որ աղջիկ ծնի
ինձ շնորհէ , որ դոնէ աշխարհիս վրայ քոյր
մ'ունենամ , հօրս ալ դուժը շարժելով իմ
վրաս՝ շատ աղէկ ըսաւ , խնդիրքդ կը կա-
տարեմ , թէ որ աղջիկ ըլլայ . իսկ իմ պա-
լատիս մէջ չպիտի ըլլայ , կառնես՝ ուրիշ
երկիր կը տանիս ծծմայր կը դռնաս , կը նա-
յիս ի՛նչ կընես ըրէ , մեկ մ'ալ իմ կողմերս
չես հանդիպիր : Երբոր մայրս աղջիկ ծնաւ ,
առի դայեակին ձեռքէն , հեծայ ձիուս վրայ
ինկայ լեռները , բաւական ստակի դումա-
րով . մինչև դտայ գեղեցիկ այր (մաղարայ)
մը : Ասանկով ամեն օր որս բռնելով և այ-
ծի կաթ կերցնելով կը մեծցնէի , մինչև որ
եղաւ 10 տարուան . այն ատեն կերակուր
եփել սորվեցուցի , և ոչ մէկ բանի մը կա-
րօտ չըլլալով կապրէինք . միտքս ալ այս
էր որ՝ երբ 18 տարեկան ըլլայ , քաղաք մը
տանելով պիտի կարգէի : Օր մը որ ես այլը
չէի , ձիաւոր երիտասարդ մը այրին առջևէն

կանցնի. քոյրս ալ փոխանակ զինքը պահե-
լու, համարձակ դիմացը ելնելով կըսէ,
Պարոն՝ ո՞ւր բարով, հրամմէ հաս, քեզի բան
հանեմ կեր խմէ : Երիտասարդը՝ երբ քոյրս
կը տեսնայ, կը զարմանայ թէ՛ այս աղջիկը
հոս ի՞նչ բան ունի, ո՞վ է՛ ով չէ, ըսելով,
կիջնայ ձիէն կը մտնայ այրէն ներս. աղջիկը
ասոր առջին քիչ մը բան կը դնէ. կուտէ կը
խմէ. շատ մը խօսելէն ետքը՝ խօսքը ծա-
ծուկ սիրուն վրայ կը կապեն. կտրիճը խօսք
կուտայ թէ՛ ես ասկէ քեզ առնելով կը
փախչիմ. քոյրս կըսէ թէ՛ չըլլար. « Ես եղ-
բայր մ'ունիմ, թէ որ զիս հոս չգտնէ աշ-
խարհս տակն ու վրայ ընելով, կուգայ մեզ
կը գտնէ ու երկուքս ալ կսպաննէ : Քեզի
խրատ մը տամ. այս այրին ետին անտառ
է՛ այս գիշեր գնա՛ հոն պահուրտէ՛ և գի-
շերը երբոր եղբայրս քնանայ՝ կելնեմ ոտ-
քերը ձեռքերը կը կապեմ, և ես ալ երբոր
պօռամ՝ շուտով եկուր հասիր » :

Արիկուան այրը եկայ՝ կերակուր եփե-
ցինք, կերանք ու պոռկեցանք : Քոյրս գի-
շերանց ելեր խորունկ քնոյս ատեն ձեռքս
ոտքս այնպիսի վարպետութեամբ կապեր է,
որ չեմ կրնար պատմել. մէկ մ'ալ ձայն մը

եկաւ ականջիս թէ՛ Պարո՛ն ո՞ւր ես, ես ալ
քնոյս մէջէն վեր ցատկեցի, այս ի՛նչ ձայն
է ըսելուս չմնաց՝ տեսայ որ ի՛նչ կը նայիս,
ձեռքս ոտքս իրար կապած են. շուտ մը
քոյրս կանչեցի՝ աղջիկ եկուր, սա կապերը
քակէ ըսի, քոյրս փոխանակ կապերս քա-
կելու, ձեռքի փայտովը այնպէս դլխուս
դրաւ որ ըղեղս ցրուեցաւ. ու կըսէր թէ
ըէ՛ անպիտան, քեզ հիմա ստաննել պի-
տի տամ, որ դիս աս այրին մէջ ձգեր ես:
Չարմացայ մնացի, արիւնս քար կտրեցաւ թէ
աս ինչ խօսք է որ ինձ կըսես քոյր իմ. ըսե-
լուս չմնաց, նայիս որ կտրիճը եկաւ ներս
մտաւ՝ և երբ դիս տեսաւ մէկէն վախցաւ
ու քրոջս ըսաւ. ես ատոր աչքերէն կը վախ-
նամ. ի՛նչ պիտի վախնաս կըսէր քոյրս. ան
քեզի ի՞նչ կընայ ընել. ես զանի անանկ
վարպետութեամբ կապեր եմ որ՝ շարժելու
անգամ կարող չէ. այս խօսքերը որ քոյրս
կընէր՝ ողորմելի աղաչանքներ կընէի թէ՛
ինձ սպաննել մի՛ տար, արդեօք իմ աղէ-
կութիւններս մոռցա՞ր, որ դրկովս եմ սլը-
տըտցուցեր, ու ամեն կերպ նեղութիւններդ
քաշեր եմ. մինչ ասանկ սիրտ կակղցնելու
բաներ կը խօսէի. քոյրս մէկէն վրաս եկաւ.

այ կը խօսի՞ս ըսելով, մասները աչքս խօթե-
լով կուրցուց : Երբ աչքերուս լոյսը կորսըն-
ցուցի, հէ՛յ վա՛հ ըսի . ըստ առածին թէ՛
« պէսլէ դարկայը քի՛ կէօղիւնիւ օյսուն » և
Երբ դիս մորթելու եղան, երիտասարդը
քրոջս ըսաւ թէ՛ եկո՛ւր աս մարդուն արիւ-
նը չմտնեմք . տո՛ւր ինձ տանիս տեղ մը
ձգեմ, որ երթայ անօթի ծարաւ հոն սատ-
կի . աս խօսքին վրայ քոյրս հաւանեցաւ և
կտրիճը դիս առաւ բերաւ այս հորը ձգեց :
Եւ 22 օր է որ հոս անօթի ծարաւ ձգուած
եմ, ի՞նչպէս չյիշեմ հօրս բարեգործութիւնը
որ աղջիկ դաւակ չուզելէն վերջը, խղճել
այ կուտար :

Երբ ազնիւ տղան աս խօսքերը լսեց,
զարմանալով ըսաւ . փառք Սատուծոյ . աս
մարդուն ցաւը լեռ եղած, իմ ցաւս անոր
քովը ոսպ մ՛անգամ չէ . դիցուք թէ իմ
քաչածներս նզոված ապերախտ գերիի մը
ձեռքէ է . ասորը ինչ ըսեմ . իր մեծցուցած
քրոջը ձեռքէն այս կերպարանքն է մտեր .
հոգ մի ըներ կըսէ ազնիւ տղան . ու մխի-
թարական խօսքերով կըսէր՝ Սատուած քեզ
օգնական ըլլայ, ես գրեզ իմ քովէս չեմ
զատեր . հետս կեր ու խմէ որ մինչեւ Սա-

տուած ողորմութեան դուռ մը բանայ. աղ-
նիւ տղան կը մտմտար թէ ինչ ընեմ այս
կոյր Գրնեցին, ու միշտ առ Սատուած կա-
ղաչէր թէ՛ դու փրկիչ ըլլաս այս խղճալիին:
Օր մը նայիս յանկարծ երկու թռչուն եկաւ
աղնիւ տղային առջևը, որոնց մէկը կոյր էր
միւսին բերանը կանանչ տերև մը կար. ան
տերևը երբ կոյր թռչնոյն աչքերուն քսեց,
իսկոյն կոյր թռչնոյն աչքը բացուեցաւ ու
թռաւ դնաց. միւսն ալ տերևը բերնէն ձը-
ղեց ու դնաց:

Երբ տեսաւ աղնիւ տղան, աս Սատու-
ծոյ կողմանէ է ըսելով՝ առաւ թռչնոյն բեր-
նէն ինկած տերևը ու Գրնեցւոյն աչքին
քսածին պէս՝ իսկոյն աչուրները բացուեցաւ
ու փառք կուտար Սատուծոյ. և ուր տեղ
ըլլալը գիտնալով կըսէր. « Եղբայր իմ՝ կե-
ցած այրս ասկէ 5 ժամ կը քշէ, շուտ կըր-
նանք երթալ. աս ըսելով երկուքը մէկէն
ճամբայ ելան, այլը հասան ու ներս մտ-
նալով տեսան որ երկուսն ալ նստեր են,
մէկը սոխ՝ միւսը միս կը ջարդէր. քոյրը եր-
բոր տեսաւ եղբայրը, ինկաւ մարեցաւ.
կտրիճն ալ պաղեցաւ մնաց թէ ինչպէ՛ս ե-
ղեր է սր այս ողջ մնացեր է, և աչքերն

այ առողջացած . և ընկեր այ ունենալուն
դողը սիրտը առեր էր . թէ չըլլայ որ դիւ
սպաննեն » : Գրնեցին հարցուց երիտասար-
դին թէ՛ եղբայր ինչ մարդ ես . ան այ ը-
սաւ , սուկական մարդու զաւակ եմ . Գրնե-
ցին ըսաւ . ո՛վ եղբայր հօրդ մօրդ անէծքը
վրադ է եղեր , որ Սասունած այդ ապե-
րախտը քու դիմացդ հանեց , ձեր ըրածը
ձեզի , իմ ձիւ տուէք երկիրս երթամ . ձին
առնելով վրան հեծաւ և մնաք ձեր շարու-
թեամբ , ըսելով իրարու հրածարական համ-
բոյրներ տալով բաժնուեցան : Գրնեցին շատ
շնորհակալութիւն ընելէն վերջը ազնիւ տղա-
յին , դարձաւ իւր հայրենական ժառան-
գութիւնը ստանալու . տղան այ մինակ մնա-
լով սկսաւ Թաժկաթ քաղաքին ճամբան
բռնել : Ատրիճը և Գրնեցուոյն քոյրը որ ը-
սես այրը մնացին . թող հոն մեան անոնք՝
մենք դանք մեր պատմութեանը :

—

ՉՈՐՐՈՐԴ ԴԻՊՈՒԱԾԸ

Մինչ կը շարունակէր ազնիւ տղան իր ճա-
նապարհը , որ մը տեսաւ որ Բաղէ ըսուած
թռչունը , Սնդղին (ախպապա) կտուցէն
բռնել կուղէր , որ սպաննէ , խեղճ Սնդղը

Ժեր ըլլալով ժամանակ չունէր որ հետը
կռուի, ազնիւ տղան որ տեսաւ դետնէն
քար մ'առնելով, Բաղէին գլխուն դարնե-
լուն պէս՝ Անդղին կտուցը թող տուաւ,
ու ինքն ալ հոն մնաց:

Անդղը այն ատենը լեզու ելնելով իր
բարերարին ըսաւ թէ՛ ո՛վ տղայ՝ քեզի կը-
սեմ, դուն որ աս աղէկութիւնը ինձ ըրիր,
եկուր աս վրայէս փետուր մ'ա՛ռ ու պահէ,
և երբ նեղութեան մը հանդիպիս՝ ծխէ, և
ես հոտը առնելով կուզամ, ինչ և իցէ կեր-
պիւ կազատեմ. շատ աղէկ ըսաւ. Անդղին
վրայէն փետուր մ'առաւ՝ իր ընչապանակին
մէջ դրաւ՝ ու սկսաւ շարունակել իր ճամ-
բան:

ՀԻՆՔԵՐՐՈՐԴ ԴԻՊՈՒԱԾԸ

Երթալու ատեն տեսաւ որ կապիկին
մէկը ձորին մէջը ձագեր բերեր է. ու ձորը
զով ըլլալուն՝ կուզէր որ ձագերը լեռանը
վրայ արևը հանէ. բերանը կառնէր մէկիկ
մէկիկ լեռանը վրայ կը հանէր, բայց վար
կը թափէին. տղան տեսաւ որ կապիկը իր
նպատակին չպիտի կրնայ հասնիր, դժացաւ
ու ձիէն վար իջնալով ձագերը ժողվեց բե-

բաւ լեռան վրայ աղէկ տեղ մը դրաւ, որ ալ
վար չէին կրնար գլորիլ. երբ կապիկը աս աղէ-
կութիւնը որ տեսաւ լեզու ելաւ ու ըսաւ,
որովհետեւ աս աղէկութիւնը գուն ինձի ը-
րիր. եկու իմ կունակէս ափ մը բուրդ կտրէ
ու պահէ. ու երբ նեղութիւն մ'ունենաս,
ծխէ. շուտ մը քեղ օգնական կը հասնիմ:
Ազնիւ տղան հաւանելով գնաց ափ մը բուրդ
առաւ ու ընչապանակին մէջ դնելով՝ սկսաւ
իբր ճամբան շարունակել:

ՎԵՑԵՐՐՈՐԴ ԴԻՊՈՒԱՅԸ

Տղան երթալու ասեն ծովու մ'եղերք
հանդիպեցաւ ուր տեսաւ որ դլիին մը ե-
ղերքը ինկած էր, կը ջանար որ զինքը ծովը
ձգէ բայց անօգուտ. տղան տեսաւ որ դըւ-
փինը չպիտի կրնայ ինքզինքը ծովը ձգել.
ձիէն իջաւ ու ձուկը ծովը հրելով ինչ և իցէ
ցամաքէն ազատեց. աս բարիքը որ տեսաւ
ձուկը լեզու ելաւ կանչեց, թէ ո՛վ տղայ
եկու վրայէս փուշ մ'առ, և երբ նեղու-
թիւն մ'ունենաս՝ ծովու մ'եղերք իջիր ծխէ
ես քեղ օգնական կը հասնիմ. հաւանեցաւ
տղան ու փուշ մ'առնելով միւսներուն քովը
դրաւ: (Գու ով կարդացող մի՛ զարմանաք

Թէ՛ արդեօք Սնդդը (ախպապա) կապիկը
(մայմուն) ձուկը կը խօսի՞ն . կամ թէ՛ կա-
րելի՞ բան է որ կենդանի մը մարդու պէս
խօսի . չե՞ս մի դիտեր , որ Բաղաամին էջն
ալ որ չորքոտանի անասուն էր , լեզու ել-
նելով պատասխան տուաւ Բաղաամին . ա-
սանկ ալ որչափ որ անհնար բան կայ աշ-
խարհիս մէջ , հնարաւոր է Սատուծոյ առջին) :

ԵՕԹՆԵՐՐՈՐԴ ԴԻՊՈՒԱԾԸ

Սասնկ վեց եօթը օր առաջ երթալէն
ետքը՝ հեռուէն մէկ պարսպաւոր գեղեցիկ
շինուածքով քաղաք մը տեսաւ , որ աչք
պէտք էր նայելու . ձին քշեց , քաղաքը հա-
սաւ ու կրսէր թէ՛ դուցէ այս է Թաժկաթ
քաղաքը , ու ներս մտնալով օտարականի
նման կը շրջէր . տեսաւ որ կին մը կայներ
իրեն կը նայէր , ողջոյն տուաւ կնկանը , ու
հարցուց . մարիկ աս երկրին անունը ի՞նչ է .
ան ալ ըսաւ ինչո՞ւ հարցուցիր , դուն աս
քաղաքը եկած չունիս մի՞ . ոչ եկեր եմ և
ոչ ալ լսեր եմ . ըսաւ տղան : Աինը տեսաւ
որ բարի ու խելացի զաւակ մ'է , որդի՛ ը-
սաւ . թէ՛ որ կուզես հրամանէ իմ տունս ,
Սատուծով ես քեզ կը նայիմ մօր պէս ,

մինչև որ երթաս : Քաղաքս փորձանաւոր է
կրսէր մտօքը չըլլայ որ դէպքի մը հանդպի :

Աղնիւ տղան դո՛հ ըլլալով գնաց կնկան
տունը հանգչեցաւ , ու սկսեց տանը ամեն
պիտոյքը՝ ինքն հողալ . Յ-Տ օր անցնելէն
ետքը՝ տղան ուղեց որ բոլոր շուկան երթայ
պարտի ու տեսնայ . հրաման առնելով տան-
տիկնոջէն դուրս ելաւ պարտելու . մէկ մ'ալ
տեսնայ որ՝ անդիէն երիտասարդ տղայ մը
դահիճները բռնած կը բերեն , բաղմութիւն
մարդկանց ալ մէկտեղ . աս որ տեսաւ աղ-
նիւ տղան , ինքն ալ գնաց հետերնին տես-
նելու թէ ի՛նչ բան է . տեսաւ որ՝ ինչ կը
նայիս տղային գլուխը կտրեցին : Աղնիւ
տղան մէկին մէկալին կը հարցնէր պատճա-
ռը . բնաւ մէկը պատասխան չտուաւ , սրը-
տին ցաւ եղաւ . շուտ մը տուն եկաւ , տան-
տիկնոջը պատմեց ու պատճառը հարցուց .
կինն ալ ըսաւ , ո՛վ որդի՛ դու մեր քաղաքը
չգիտե՞ս փորձանաւոր քաղաք մ'է , աս քա-
ղաքին անունը Քէլման կըսուի . մարդս թէ-
լի նման կը մանէ . տղան կը հարցնէր զար-
մանալով , մայրի՛կ աս քաղաքը Քաթկաթ
քաղաքը չէ՞ մի . տիկինը ըսաւ , ան քա-
ղաքը ասկէց տարուան մը ճանապարհ հեռի

է . աս մեր քաղաքի թագաւորը՝ Թաժկաթ
քաղաքի թագաւորին եղբայրն է . ու ետքը
երկատասարդին գլուխը կտրելուն պատճառը
հարցուց . որդի՛ այս մեր թագաւորը աղջիկ
մ'ունի , այնքան խելացի ու իմաստուն է որ
նմանը չկայ . անանկ լսելը եմ թէ՛ մէկ մ'ալ
ասոր նման իմաստուն իւր հօրեղբօրը աղ-
ջիկն է . ան ասկէց աւելի խելացի է կրսեն ,
որն որ Թաժկաթ քաղաքի թագաւորին աղ-
ջիկն է . ինչպէս հիմայ դուն կը հարցնես ան
քաղաքը . աս աղջկան բնութիւն մը կայ՝
որ ամենևին չխօսիր , մինչև որ իմաստուն
խօսք մը չլսէ . ասանկով 20 կարիճ եղաւ
որ՝ երթալով կը յաղթուին ու գլուխնին
կտրել կուտայ . այնպէս խօսք ըրած է թէ՛
ամէն իմաստուն որ կուգայ ու կարող կըլ-
լայ բերնես պատասխան հանել , ես յաղ-
ղթուած կըլլամ . իսկ թէ որ կարող չըլլայ՝
գլուխը կտրել կուտամ :

Աս խօսքերը երբոր աղնիւ տղան լսեց ,
մէկէն երեսին գոյնը փոխուեցաւ ու աչքերը
արցունքով լեցուեցաւ : Տանտիկինը ըսաւ .
տղայ՝ ինչ եղար , քեզի մնաս չկայ . դուն
քեզի ինչո՞ւ կը հալեցընես ու կը մաշեցընես :
է՛յ , մարի՛կ ըսաւ . ամեն մարդ իր ցաւը

գիտէ՛ցաւ՝ իմ ցաւս պիտի ըլլայ . քանի
որ պարապ տեղը պիտի մեռնիմ :

Տանտիկինը ըսաւ . Սասունած չընէ որդե-
տա՛կ՝ ինչո՞ւ մեռնիս . դուն անոր հետ փոր-
ձուելու չես եկեր ա՛ . տղան ան ատեն քանը
ծածկեց ու մտքէն կըսէր . քանի որ չկրնամ
յաղթել ասոր հօրեղբօր աղջիկը ի՞նչպէս պիտի
յաղթեմ՝ որ անիկայ ասկէց իմաստուն է :

Անանկ չըլլար . ես անոր հետ կերթամ
փորձուելու , անանկ ալ առջիս մահ՝ անանկ
ալ ետիս մահ . թէ որ Սասունած ողորմի՛
կազատիմ ըսելով յոյսը բոլորովին Սասու-
ժոյ տուաւ : Շուկան ելաւ երբոր մտածու-
թեամբ կը պտըտէր , տեսաւ որ հաւորսին
մէկը՝ թուժակ թռչուն մը վանդակը դրած
կը ծախէ . աս որ տեսաւ տղան՝ քանի որ
իր հօրը տունը շատ տեսած էր՝ մօտեցաւ
որսորդին ու գինը հարցուց . որսորդը ըսաւ .
հոս գինը կտրել չըլլար՝ ծածուկ տեղ մը
ունի՞ս , հոն երթանք . շատ աղէկ ըսաւ
տղան՝ ու տանտիկնոջը տունը սենեակ մը
մտցուց . ազնիւ տղան որսորդին երեսը նա-
յեցաւ՝ կերպարանքը փոխուած ահաւոր
ծերունին կերևնար աչքին . զարմացաւ տղան
ու չէր գիտեր ինչ ըսելը :

Այն ատենը տղուն ձեռքէն բռնեց ահա-
ւոր ծերունին ու ըսաւ . մի վախնար ես քե-
զի Աստուծով օգնական կը հասնիմ . ահա
այս թռչունը՝ քեզ ինչ որ խրատէ . ան խրա-
տովը շարժէ վերջդ բարի կըլլայ . ըսաւ ու
անյայտ եղաւ :


Ազնիւ տղան զարմացած՝ ասդին անդին
նայեցաւ որ մարդ չկայ . թռչունը բերանը
բանալով կըսէր տղուն , ո՛վ ազնիւ տղայ՝
անհոգ եղիր . Աստուծով իմ խրատովս կը
յաղթես թաղաւորին աղջկանը , բայց քեզի
ինչ որ կըսեմ՝ լաւ մտիկ ըրէ . թեւերը լայն
վերարկու մը գտիր ու հագիր , զիս ալ թեխդ
մէջ պահէ աներկիւղ գնա՝ արքային դէմ ,
և հրաման առ աղջկան քով երթալու , երբ
աղջկան սենեակը մտնաս՝ զիս ձեով մը
մարդ չտեսած դրան ետին տեղ մը դիր ու
ներս մտիր , բարեւէ աղջիկը , թէպէտ ան
չխօսիր . դուն այն ժամանակը երեսդ դէպի
դրան դարձուր դրանը բարեւէ , ես աներե-
ւու թարար բարեւդ կառնեմ՝ և անոր բեր-
նէն խօսք հանել կուտամ : Ազնիւ տղան
երբ լսեց աս խօսքը՝ աշխարհ իրեն եղաւ ,
ու թռչունը հետը առած՝ ձեով մը գնաց
թաղաւորին մօտն ու երկրպագութիւն ընե-

լով ողջունեց . ձեռքը սրտին վրայ դնելով
կանգնեցաւ արքային դէմը , և արքայն
հարցուց . տղայ՝ ի՞նչ բանի համար եկեր
ես քովս , և ի՞նչ կուզես . ազնիւ տղան ը-
սաւ . « Արքայ յաւիտեան կաց » ծառայ-
լսեր եմ թէ՛ քու պալատդ իմաստուն կայ .
ուստի եկայ անոր հետ փորձուելու , տես-
նամ թէ՛ նա է յաղթող , թէ ես . թագա-
ւորը ըսաւ . տղայ մեղք ես , քու պատա-
նեկութեանդ ալ մեղք կըլլայ . ինչու որ
ունեցած իմաստութիւնդ իմ աղջկանս քովը
ոչինչ է . ասոր ծայրը մահ է : Ես աղէկ
բնայ տղան , թէ որ յաղթուեցայ՝ մահ ինձ .
հասաւ թէ աղջիկդ յաղթուի՝ անոր ինչ .
արքայն ըսաւ , թէ որ իմ աղջիկս յաղթես՝
անոր մահ չըլլար . միայն թէ ընկուղի չափ
աղամանդեայ քարով մատանի մը կուտամ
քեզ , և երկրորդ թագաւոր կարդալ կու-
տամ քու անունդ քաղաքիս մէջ : Հաւնե-
ցաւ տղան , դնաց աղջկան սենեակը ու մը-
տաւ ներս տեսաւ որ հրաշալի զարդարանք-
ներու և ծիրանիներու մէջ այնպէս դար-
դարուած էր որ՝ երկինք կը նմանէր , և ին-
քը արեգական նման մէջը կը շողար . թրու-
չունը ձեով մը դրան ետին տեղ մը դրաւ՝

ներս մտաւ ողջոյն տուաւ աղջկանը՝ որն որ
նաժիշտներով կը դուարձանար, բայց մէջ
տեղը պիւրիւնճիւկէ վարագոյր մը քաշած
էր՝ որոնք ասդիէն իբրև շամանդաղ կե-
րենային. տղան տեսաւ որ ողջոյն առնող
չկայ, շուտ մը երկու բարձ առաւ սենեա-
կին մէջ տեղը դրաւ, երեսին կէտը աղջը-
կանը՝ կէտը դրանը տալով ողջոյն տուաւ.
շուտ մը թռչունը աներևութարար իբրև
դուռ ողջոյնը առաւ, ու կըսէր. ո՛վ որդի
թագաւորի՝ ի՛նչ մտօք ելար աս տեղը ե-
կար. չէի՞ր մի գիտեր որ՝ հոս մտնողը այս
շիմար աղջկանը ձեռքէն մեռեր են. այս
դարչելի չիքը, ու լկտի նզովածը իր գիտու-
թեանը վրայ հպարտանալով, դինքը քաւ
լիցի, Աստուծոյ տեղ դրած նասեր ու ա-
րիւնի ալ ձեռք զարնելով մահասպարտ է
եղեր :

Աս խօսքերը որ աղջիկը լսեց դռնէն, կը
կատողէր և մէկ մ'ալ կը զարմանար թէ՛ այս
տղան թագաւորի տղայ ըլլալով՝ աս կող-
մերը մինակ ինչպէս եկեր է. կամ ո՛րքան
հմուտ է ամեն գիտութեանց, որ դրան
հրամայելով լեզու հանեց ու պատասխան
կատնէ ու կուտայ. ասուչ մնալով ականջ

կը դնէր դրանք խօսքերուն . թռչունը ըսաւ,
 ո՛վ որդի թագաւորի և աղնիւ մեծատոհմ,
 քեզի բան մը պիտի պատմեմ, մտիկ ըրէ .
 ինչու որ այս պատմութիւնը կիմացնէ, ու
 բուն իմաստութիւնը՝ և որուն յիմար ըլլալը :



Թ Ռ Չ Ն Ո Յ Ն

Ա Ռ Ա Ջ Ի Ն Պ Ա Տ Մ Ո Ի Թ Ի Ի Ն Ը

Ա Ռ Ա Ջ Ն Ի Ի Տ Ղ Ա Ն



Ժամանակաւ հարուստ ու անուանի մար-
 դուն մէկը՝ երեք հատ որդի ունէր, այս
 մարդը ամեն ունեցած ինչքին մէջը գեղե-
 ցիկ թռչուն մ'ունէր՝ որուն նմանը չկար .
 մինչև այն աստիճան հարստութեան հասնե-
 լուն պատճառը թռչունն էր . ուստի որ-
 դիքը օր մը իրարու կըսէին թէ՛ հայրերնիս
 մեռնի նէ՛ թռչունը որո՞ւ ժառանգ պիտի
 մնայ . մեծ եղբայրնին կըսէր թէ՛ ինձ, մի-
 ջակը կըսէ՛ ինձ, փոքր եղբայրը՝ ինձ . աս
 խօսքը մէջերնին օր աւուր շատնալով մեծ
 թշնամութիւն ընկաւ մէջերնին, և կուզէին
 մէկզմէկ մեռցնել: Աս բանս երբ իմացաւ
 հայրը՝ կանչեց որդիքը քովը ու կըսէր . աս

ձեր կռիւք ոչինչ բան է, որ մինչև անդամ
մէկզմէկ մեռցնել կուզէք. հիմայ մէկ մէկ
ձի ու 100 ական զուրուշ կուտամ, կերթաք
ուրիշ երկիր կը տատիք ու վաստակ ընելով
կուգաք. տեսնեմ որերնի՞դ երկու փարայ
աւելի վաստակով էք, թռչունը անոր է :
Հաճելով տղայքը ելան 3 ը միատեղ եր-
թալով հասան լեռան տակ, ու ճամբան 3
բաժնուեցաւ, խորհուրդ ընելով ամեն մէկը
մէկ մէկ ճամբայ բռնեցին գացին, միջոցը
երեք տարի անցնելէն ետքը՝ վերստին այն
լեռանը տակ երեք եղբարք իրար գտան.
երբոր իրար տեսան, մեծ ուրախութեամբ
խորու հետ կը խօսէին. այսպէս : Հարցուց
մեծ եղբայրը միւս եղբայրներուն թէ՛ ի՞նչ
վաստակ ըրիք, երկուքն ալ ըսին թէ՛ փա-
րայ մ'ալ չըրինք. մեծ եղբայրը ըսաւ. ի-
րաւի ես ալ չունիմ, բայց մեծ արհեստ
կամ (մարիֆէթ) մը սովբեցայ, որ ինձ (քիմեա)
է. ի՞նչ է ըսին նէ՛ ըսաւ որ աղւոր գուշա-
կութիւն (ըռեմ թափել) կընեմ. հեռու աշ-
խարհներ ինչ որ պատահի, զորօրինակ թէ
այն ինչ անձը ողջ է թէ մեռած է շուտ մը
կիմանամ :

Երկրորդն ալ ըսաւ. ես ալ այնպէս բը-

Ժրշկութիւնս ասկրեցայ որ հոգեարք մարդը
կամ անասունը թէ որ մեռնելու է՝ դեղով
կողջնցնեմ. փոքր եղբայրն ալ ըսաւ. ես
ալ սուրհանդակութիւնս ասկրեցայ այնպէս
արագ որ՝ 20 աւուր ճամբան երկու օրը
կառնեմ: Ես աղէկ ըսին. ամենաւս ալ
արհեսար աղէկ՝ ու մեծ եղբօրն ըսին. ե-
կո՛ւ (ուէմ) թափէ, տեսնանք մեր հօրը
թռչունը ողջ է՝ թէ մեռած. փէք աղէկ ը-
սաւ. (ուէմ) թափեց, խնայաւ ու կըսէր
վայ, վայ. թռչունը այնպէս հիւանդ է որ
մէկ օրէն պիտի մեռնի: Աման ըսաւ միջակ
եղբայրը՝ և ծոցէն պղտիկ սուփ մը հանե-
լով կըսէր. ասոր մէջի դեղէն թէ որ քիչ
մը կատուցին դպցունեն, շուտ մը կառողջա-
նայ. փոքր եղբայրը աս որ լսեց սուփը
ձեռքէն խլեց ճամբայ ելաւ, ու նետի պէս
10 օրուան ճամբան մէկ օրը առաւ, հօրը
տունը հասաւ, ու ըսաւ. շուտ ըրէք թռ-
չունը բերէք, ու դեղէն քիչ մը կատուցին
երբոր քսեց՝ թռչունը կենդանացաւ. 10 օ-
րէն ետքն ալ միւս եղբարքը եկան, ու կը
կռուէին թէ՛ թռչունը իսն պիտի ըլլայ, ո-
րովհետեւ ես ազատեցի մահուանէ. այսպէս
կարգաւ իսն է կըսէին որովհետեւ մէկ մէկ

պատճառ ունին : Հայրերնին տեսաւ որ
ասոնք կռիւր մեծցուցին , առաւ աղաքը
դատաւորին տարաւ , որ շատ խմաստուն
մէկն էր . դատաւորը դատը կտրելով՝ ար-
ժան տեսաւ թռչունը (ուհմ) թափողին :
Թռչունը ըսաւ . ո՛վ աղնիւ աղայ , դու որ
հոն ըլլայիր՝ թռչունը որո՞ւ կուտայիր . աղ-
նիւ աղան ըսաւ . բժշկին կուտայի :

Աս խօսքերը որ լսեց աղջիկը՝ սիրտը չը-
համբերեց ու ըսաւ . տեսա՞ք մի ձեր յի-
մարութիւնը , ես որ հոն ըլլայի՝ թռչունը
պղտի եղբօրը կուտայի : Աղնիւ աղան աս
խօսքը բերնէն երբ առաւ՝ քեզ յաղթեցի ,
յաղթութեանս նշանը տուր ըսաւ . քովը
դանուողները հօրը աւետիս տարին թէ՛ աղ-
ջիկդ յաղթուեցաւ . ուստի դուստրը կան-
չեց հարցուց . նա ալ ժխտեց , թէ՛ սուտ
է հայր եթէ կամք կրնես վաղն առտու
թող դայ աղան . թէ որ բանիւ զիս յաղ-
թէ , խօսք դրած պատիւները թող ժա-
ռանդէ . հաւանելով աս խօսքին կանչեց
աղան , ու ըսաւ . « Ես իմացայ որ դու ի-
մաստուն մէկն ես , վաղը վերստին եկու
հակաճառէ . որովհետեւ աղջիկս ուրացաւ
յաղթուիլը , դարձեալ խօսքս՝ խօսք է . ե

Թէ որ չյաղթես, քեզի մնաս չտալէս ետքը
քեզ չպատուով կը խրկեմ քաղաքէս » : Տղան
հաւանելով թռչունը թռին մէջ դրաւ ու
տունը եկաւ :

Աերստին տղան հարցուց թռչունին թէ՛
ի՛նչպէս ընենք . ան ալ ըսաւ , այսօր ալ
դիս բարձին ետին դի՛ր . բարձին հետ խօսէ .
ես անկէց պատասխան կուտամ իբրև բարձ .
աղջիկն ալ աստին դուռը փոխեր էր , որ
գայ նէ՛ դրանը խօսիլ չկրնայ տալ : Միւս
օրը դնաց տղան բարևեց զաղջիկը , նա ալ
բարևը չառաւ . դարձաւ բարձին բարևեց .
թռչունն ալ իբրև բարձ բարևը առաւ , ու
ըսաւ . այսօր ալ ես քեզի պատմութիւն մը
պիտի ընեմ , աղէկ միտ դիր :

Աղջիկը կապշէր ու կը զարմանար թէ
այս ի՛նչ հրաշք է . ասանկ զարմանք չըլլար
ըսելով՝ ականջ դրաւ թռչնոյն պատմու-
թեանը :

ԵՐԿՐՈՐԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ատենով տիւրիկէր մը կար , խիտ ծոյլ
ըլլալով՝ կըսէր . այս ի՛նչ արհեստ է . ըլլայ
որ՝ օր մը մէկ տեղաց լյնալով մեռնիմ նէ՛
ի՛նչ պիտի ընեմ . ես աս արհեստէն (վաղ)

կուգամ ըսելով՝ գլուխը առաւ ուրիշ երկիր կերթար . ճամբան ասոր դէմ մէկը ելաւ , ու բարեկեցին զիրար . յետոյ հարցուց տիւրկէրը . եղբայր՝ ի՞նչ մարդ ես , ի՞նչ արհեստ ունիս , և ո՞ր երկիրը կերթաս . նա ալ ըսաւ . մարդ եմ և ծառայ Աստուծոյ . արհեստս դերձակ է . ասեղ խօթել հանելէն ձանձրանալուս՝ ուրիշ երկիր պիտի երթամ , որ ուրիշ արհեստ մը գտնամ : Ամա՛ն ըսաւ . ես ալ տիւրկէր եմ , հրամանսոցդ նման գործէս ձանձրանալուս՝ գլուխս առեր կերթամ : Ասոնք երկուքը մէկ եղած երբոր կերթային , տեսան որ խորունկ կարգացող մը գիրքը ձեռքը առած՝ կերթար ու կը կարդար . բարե տուին ու ասոր հետ ալ ընկեր ըլլալէն վերջը՝ գիւղ մը հասան , ուր շատ գող կար . խորհուրդ ըրին որ՝ գիշերը ամեն մէկը չորս չորս ժամ կարդաւ արթուն կենան ու պահպանեն . առաջ տիւրկէրը սպասեց ու սիրտը նեղանալով ելաւ կոճղ մը գտաւ , և ան կոճղը կամաց կամաց պատուական աղջիկ մ'ըրաւ , ամեն մէկ յօդուածովը . ժամը չորսը գնաց , դերձակին ձայն տուաւ , ու ինքը գնացաւ : Գերձակը հեռուանց տեսաւ որ կոճղ մը կայ .

քովը դնաց նայիմ ինչ բան է ըսելով, տե-
սաւ որ աղջիկ մը շիներ են, հասկցաւ ըն-
կերին բանը ըլլալը, ու ասանկ մերկ թո-
ղուլ բան չէ ըսելով շուտ մը կերպաս
(խուճաշ) հանեց կապոյին մէջէն մէկ ձեռք
(խաթ) մը հանգերձ կարեց հագցնելով կանգ-
նեցուց աղջիկը. ժամն ալ Տ դալու վրայ
էր, ուստի դնաց կարգացողին ձայն տուաւ
ու ինքը դնաց պառկեցաւ. երբ կարգա-
ցողը տեսաւ որ աղջիկ մը է այ կանգնած
ելաւ դնաց քովը թէ ո՞վ է տեսնայ՝ տե-
սաւ որ հագուեցուցած փայտէ աղջիկ մ'է-
սա ասանկ ձգել չըլլար ըսելով գիրք մ'ա-
ռաւ վրան այնքան կարգաց' մինչև կարգա-
լուն դճրութենէն փայտը հողւորած մարմին
դարձաւ ու կը շրջէր, ուստի երբ լուսցաւ,
միւսները ելան տեսան որ աղջիկը կը պար-
տի. ասանք որ մը մէկզմէկէ բաժնուիլ ու-
զելով տիւրկէրը կուզէր որ աղջիկը ինք
առնէ, դերձակը և կարգացողն ալ կուզէր
որ ինքն առնէ. այսպէս սկսան կռիւ ընել
գիւղացի մը կանցնէր ասոնց քովէն՝ հար-
ցուց. ի՞նչ կը կռուիք, անոնք ալ բանը հաս-
կըցուցին. գիւղացին ըսաւ ատ մեծ բան մը
չէ. եկէք ձեզի դատաւորին տանիմ ան ձեր

վէճը կը կտրէ. գացին գատաւորին , ան ալ
արժան տեսաւ գերձակին , ու աղջիկը ա-
նոր տուաւ :

Թռչունը ըսաւ . ո՛վ աղնիւ տղայ՝ թէ որ
հոն ըլլայիր գուն , որո՞ւ արժան կը դա-
տէիր . տղան ալ ըսաւ , տիւրկէրին կուտայի :

Թագաւորին աղջիկը աս խօսքը երբ լսեց՝
ըսաւ . ճշմարիտ կըսեմ՝ գուք յիմար էք ,
որ գատաստանը ծուռ կը սեանաք . ես հոն
ըլլայի՝ կարգացողին կուտայի աղջիկը , որ
կենդանութեանը ու հողեորելուն պատճա-
ռը ինքն է եղեր : Աղնիւ տղան աս խօսքը
որ աղջկանը բերնէն առաւ , կըսէր . յաղ-
թեցի քեզ , խօսք չունիս , հչան կը խնդրեմ
ըսելով : Աղնիւ տղան գնաց արքային գի-
մացը երկրպագութիւն ըրաւ , ու ըսաւ .
մատանին տուր որ երթամ իմ երկիրս . թա-
գաւորը իմացաւ յաղթուիլը , բայց աղջիկը
կըսէր՝ վկայ Աստուած որ մէկ մ՞ալ դիտ
յաղթէ , և պատասխան հանել տայ բեր-
նէս , մատանին տալէն վերջը , իրեն կենա-
կից կրկամ : Աս խօսքը թագաւորը տղա-
յին պատմեց . տղան յանձնառու եղաւ ,
ու թռչունը առաւ գնաց տանտիկնով տու-
նը՝ շիշերը անցուց : Միւս օրը գնաց վե-

ըրաստին աղջկան սենեակը, և թռչունը ա-
թոռի մը տակ դրաւ. ողջունեց աղջիկը,
բայց աղջիկը ողջոյնը չառաւ. տղան իր ե-
րեսը դարձուց՝ ողջոյնը աթոռին տուաւ.
Թռչունը իբր աթոռ ողջոյնը առնելով՝ սկը-
սեց այս պատմութիւնը ընել:

—

ԵՐՐՈՐԴ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Ժամանակով այրի կնկանը մէկը ածուխ
կառնէր (քէօմիւրճիէն) օր մը աղէկ ածուխ
չտալուն համար, միտքը դրաւ որ թունա-
ւորէ. ուստի՝ դեղագործին երթալով մա-
հուդեղ ուզեց. դեղագործը ըսաւ, ի՞նչ
պիտի ընես. նա ալ միամտաբար ըսաւ թէ՛
պիտի սպաննեմ. ինչու որ էրկանս ատենը
աղէկ ածուխ կը բերէր, բայց հիմայ չի բե-
րեր. դեղագործը ըսաւ. ինչո՞ւ մարդաս-
պան ըլլաս, գնա անոր հետ կարգուէ որ
քեզի աղէկ ածուխ բերէ. թէ որ ան չառ-
նէ՛ ես քեզ կառնեմ ըսաւ դեղագործը.
ան ատեն ըսաւ կիներ՝ աս գիշեր մեր տունը
եկուր. խօսք ունիմ գրուցելու, ու իր տեղն
յայտնեց. երբ իրիկուն եղաւ դեղագործը
ելաւ կնկանը տունը գնաց: Ուստի կիներ
դեղագործը փորձելու համար ըսաւ. ճշմա-

րիտը ըսէ, զիս առնելու միտք ունի՞ս, նա
ալ այո ըսաւ: Աինն ալ ըսաւ որ « վրադ
ճերմակ կտաւ մը առնես» երթաս սա գի-
մացի գերեզմանատունը մեռելի նման մինչև
առաւօտ պառկիս և վերջը կուգաս՝ քեզ
կառնեմ»: Հաւանելով այս խօսքին՝ այնպէս
մ'ըրաւ՝ որ տեսնողը մեռել կը գիտնար:

Աս գեղազործը երկու եղբայր ալ ունէր
անոնք ալ կարգուած էին. մէկը փողոց-
ներուն պահապան էր, միւսը երկրագործ.
Երբոր այս մարդը այս կերպարանքով պառ-
կած էր, երկրագործ մեծ եղբայրը ագա-
րակէն դարձած տուն կերթար, տեսաւ որ
գերեզմանատանը մէջ մեռել մը կայ ձգած,
չգիտնալով իր եղբայրը ըլլալը քովը գնաց.
աս որ տեսաւ պառկած մարդը՝ վախուն
չէր շարժէր որ չսպաննէ. ասոնք երբ լուռ
կեցած էին, միւս պահապան եղբայրնին ե-
կաւ տեսաւ որ մարդ մը ձեռքը բիր՝ մե-
ռելը կը շարշարէ, կամացուկ գնաց մեռե-
լին ոտքէն քաշելով կը տանէր որ սատա-
նային ձեռքէն ազատէ՝ ու առաւօտուն թա-
ղէ. երբոր կը քաշէր՝ սկսաւ պօռալ գեղա-
գործը թէ՛ թո՛ղ զիս, ինձմէ ի՞նչ կուղես,
աս ձայնը որ լսեցին՝ ճանչցան եղբօրնուն

ճայնը ըլլալը՝ ու պատճառը հարցուցին
այսպէս պառկելուն, ու խմացան ինչ ըլլալը:

Հիմայ մեծ եղբայրը կըսէր. « ես դրած
եմ, քեզի ջինար կարդուիլ » . նոյնպէս ալ
միւս եղբայր կըսէր . կինը վերէն ասոնք
ղննելով ըսաւ . ի՞նչ կը կռուիք փառք Ս.ս.
տուծոյ . հոս դատաւոր կայ՝ արաւօտուն
դայէք դատաւորին . ան զիս որո՞ւ արժան
տեսնայ՝ նա է իմ ընկերս :

Ս.ս խօսքին հաճեցան ու արաւօտուն
երեք եղբայրք դատաւորին դային , դատաւ
որը հասկցաւ անոնց վէճը՝ ու կինը մեծ
եղբօրը արժան տեսաւ : Թռչունը ըսաւ .
թէ որ դուն հոն ըլլայիր՝ որո՞ւ կուտայիր .
նա ալ պահապան եղբօրը ըսաւ :

Ս.դժիկը՝ որ մտիկ կընէր՝ ըսաւ . պղտիկին
արժան է , որ առաջ խօսք դրած էր . ազ
նիւ աղան ուրախութեամբ կըսէր , յաղթու
թիւնս երեք եղաւ : Ս.դժիկը երբ լսեց՝ պա
պանձեցաւ ու բան մը չկրնայ ըսել . լուր
տուին թագաւորին թէ՛ դուստրդ կրկին
յաղթուեցաւ , ուստի՝ թագաւորը մեծ պա
տիւ ընելով ու թագաւորական նշանը տա
լով կուզէր որ ինքեան փեսայ ընէ . բայց
աղան հրաժարեցաւ և իւր երկիրը երթալ

կուղէր • թռչունը առնելով ու բարե ըսե-
լով տանտիկնոջը առնը եկաւ՝ ու քանի մը
օրէն տեսաւ որ թռչունը չկայ :

Ազնիւ տղան՝ կնոջը առնը ստիպուեցաւ
բաւականատէն կենալ օղերուն անակնկալ
խառնակութեանցը համար, որ ձմրան գա-
լուստը կազդէին, բայց քիչ ատենէն բազդը
յաջողելով, օղերը նորէն շիտկուեցան, ա-
նանկ որ՝ շատերուն բերանը առածի պէս
եղեր էր այն խօսքը թէ՛ Մայիսը իր օղե-
րէն Նոյեմբերի փոխ տուած է . այս անյու-
սալի պատեհութիւնը ազնիւ տղայն ուղե-
լով չկորանցնել, նորէն ճամբայ ինկաւ մեկ-
նելով հիւրասէր կնոջը տնէն, չմոռնալով
ըստ իր հաճոյնց քանի մը ոսկի վարձք նուի-
րել անոր : Նպատակը ինչպէս որ յայտնի
է, թաժկաթ ուղեորիլ էր, մեծ ճամբայ մը
ունէր առջին, զոր ոտքով երթալ անհնար
ըլլալով, ստիպուեցաւ ձի մը վարձել մէկ
ամսուան համար, այսպէս հեծեալ և հան-
դարտ սրտով իր ճամբան կը շարունակէր
ճիշդ 24 օր, դիշերները խիստ քիչ կը քնա-
նար վայրենի ու անբեր ծառերու վրայ, ո-
րոնց տերեախիտ ոստերը անտառին մէջ
ընդարձակ տեղեր կը շքաւորէին, շատ դըժ-

ուարութեամբ կրնան ելնել անոնց վրայ, որ
բովհետեւ իրենց արմատէն մինչեւ երկու կան-
գունի չափ բարձրութեամբ վեր ցողի մը
պէս հարթ ու ուղիղ էին, թէև շատ կը
վախնար վարը մարդագետնին վրայ հանգիստ
անցունել, որուն պէս չէր կրնար ծառերու
վրայ ունենալ, սակայն դազաններու ու վայ-
րենի անասուններու վախը զինքը անհնա-
րինս կը սարսափեցնէին: Խեղճ տղան այս-
պէս թշուառութեամբ վերջապէս իր տա-
ժանելի ճամբան լմացուց, որ իրեն հազար
օրերու չափ կը թուէր:

Ճամբորդութեանը քաննչորսերորդ ա-
ռաւօտն էր, օդը՝ առջի օրերուն պէս պարզ
և պայծառ, զով զեփիւռ մը զուարճալի
դաշտին վրայէն սահելով՝ մարդերուն վրայ
խաղալ կը թուէր, դեղադայլայլ թռչնիկ-
ներ, որոնց ձայները անձանօթ կերևային
ազնիւ տղուն, խիստ կանուխ ելած՝ արե-
ւուն ճաճանչները կայգորէին իրենց անուշ
երգերովը, որ բնութեան քաղցրագոյն վա-
յելքներէն են, քաղցրակարկաչ առուակներ
օձապտոյտ կը սողոսկէին մարդաց տակէն,
փալփելով և ոստոստելով: Ազնիւ տղան
նչ սակաւ սքանչանալով անցաւ այս ակնա-

հաճոյ տեսարաններէն , որ մարդուս կենաց
գոգցես աւելի զօրութիւն կուտան : Փոք-
րիկ անառի մը մէջ էր , չորս կողմը ոստա-
զեղուն և տերեւախիտ ծառեր ու տունկեր
շրջապատած էին , կարծես թէ կանաչադարդ
պատնէչ մ'էր բնութենէն շուրջանակի հաս-
տատուած : Ազնիւ տղան չմոռցաւ իր վեր-
ջին գեղջկական նախանձաշիկը ընել հոս ,
ուրկէ ա՛լ քաղաք պիտի մտնէր արդար և
վաանգաւոր գործի մը ձեռնամխելու :

Քիչ մ'ալ յապաղելով հոն , նորէն քայ-
լերը վեր առաւ , ահամայ ձգելով այն ան-
տառակը , ուրկէ դուրս ելածին պէս Թաժ-
կաթի բարձունքները ու հաստատութեանց
և շինուածոց գազաթները նշմարեց , որոնք
նոր տեսիլքով մը կերևութանային : Արևուն
ճածանչները քարուկիր և փայտաշէն տու-
ներուն քիւերն ու մղկթաց փայլուն ոսկե-
զօծ մահիկներուն փայլունութիւնը , շինծու
արևներ կը յօրինէին , և արեգակը կարծես
թէ նախանձելով քաղաքին այն փառաւո-
րութեանը վրայ՝ առաւել ևս կը պանծար
շողարձակ :

Թամէ մը հասաւ այս սքանչելի և նշա-
նաւոր քաղաքը , որուն ներքին գիրքը և

բնակչաց վարքն ու ընթացքը՝ զինքը առաւ
ւել զարմացուցին :

Փողոցները հարկի ու տափարակ էին ,
խիստ մաքուր , արահետները մարմարեայ
սալայատակէ , տուները նոր և գեղատեսիլ ,
հոյակապ և զարդարուն , պարտէզները ըն-
դարձակ և հազուագիւտ ու գեղեցիկ տուն-
կերով , վարդենիներով , և ծաղիկներով շիտ-
կուած , մեծ խնամով հոգացուած ամեն
ինչ : — Մարդիկը հեղաբարոյ , կրթեալ և
քաղաքավար , բոլոր խօսակցութիւննին հան-
ճարաւոր և տաղանդալից էին , ամենն ալ
խմաստուն և գիտուն անձեր էին : Բնակչաց
այս վիճակը՝ զազնիւ տղայն ալ առաւել
հիացուցին միանգամայն և սարսափեցուցին ,
մտածելով թէ՛ օ՛րչափ խմաստուն կրնայ
ըլլալ թագաւոր մը և իր զաւակունքը ու
ընտանիքը , որ այսպիսի հանճարեղ ժողո-
վուրդ մը կը կառավարեն , ինքնին կըսէր
միշտ՝ թէպէտ ես ալ մեծ կրթութիւն և
ընդարձակ ուսումն առի յԵդիպատս , մին-
չեւ իսկ ամենուն դրուատանօքը խիստ բեռ-
նաւորուեցայ , բայց կը հիանամ և կսքան-
չանամ կը սարսափիմ և կը խորհիմ միան-
գամայն թէ՛ պիտի կրնամ արդեօք յարդ-

Թել Թագաւորին աղջկանը իմ ունեցած Բ-
մաստու թեամբս : Այս խորհրդածու թեամբ
և մեծաւ սարսափով կը յառաջանար քա-
ղաքին մէջ առանց համարձակելու մէկու
մը հետ խօսիլ, բան մը հարցընել, բանի մը
վրայ տեղեկութիւն մը ստանալ ուզել, և
ոչ իսկ իջեան մ'անդամ որոնել ի հանգիստ
իւր մեծ վաստակաց :

Ահաւասիկ այն ծերունին որ առաջ տե-
սեր էր, նորէն երեցաւ իրեն . և կը հար-
ցընէր ազնիւ աղուն շուարման ու երկիւղին
պատճառը, և դեռ աղան չպատասխանած
կրկնեց, դիտեմ ինչ որ կը խորհիս, և թէ
ինչո՞ւ շուարած մնացեր ես, բայց քու վրադ
անհրաժեշտ պարտաւորութիւն կը դնեմ չը
խորհիլ, այլ սիրտ առնել, քաջալերուիլ՝ որ-
պէս զի քեզի համար պատրաստուած այն
երկրորդ և աւելի փառաւոր յաղթանակը
վաստկելու բարեբաղդութիւնը ունենաս .
քեզի կըսեմ, սթափուէ, միտքդ ի գլուխ
ամփոփէ, վարանելու ժամանակ չէ, ահա-
ւասիկ քեզի կօղնեմ, և չեմ զլանար իմ
չնորհս՝ որ քեզ կարևորագոյնն է յառաջի-
կայ գործիդ մէջ, այս ըսելով իր թօշնած
և դողդոջ ցուցամատը ազնիւ աղուն ճակա-

տին դպուց, և ազնիւ տղան անմիջապէս
սթափուելով, ուժ առնելով և խորխուս-
ուելով, Թաժկաթ թագաւորին եղբօրը աղ-
ջիկը յաղթելու միջոցին ունեցած կորուսն ու
անվախութիւնը նորէն ստացաւ, համբուրեց
ծերունւոյն ձեռքը, որ այսպիսի նշանաւոր
հրաշագործութեամբ մը զինքը վարանման
խորխորատէն վեր հանեց, փարատեց եր-
կիւղը և սրտապնդեց ու դորայուց:

Ծերունին՝ ազնիւ տղուն քովը ա՛լ չյա-
պաղելով՝ աներևոյթ եղաւ: և երբ ազնիւ
տղայն նորէն ինքզինքը առանձին դտաւ, ա-
ռաջուան պէս շուարած ու տրտում չէր,
սիրտ ըրաւ, աճապարեց, և հարցուց մար-
դու մը՝ օժեշու տեղի, որ անմիջապէս ցոյց
տուաւ իրեն շքեղ իջւան մը. ո՛ւր մտաւ և
իր բնակութիւնը հաստատեց: Ուր տեղ աղ-
նիւ տղան երկու օր անգործութեամբ ան-
ցընելէն ետև, ա՛լ ուշանալը անխոհեմու-
թիւն տեսելով, համարձակութիւն առաւ
պալատն երթալու, ու աղաչանօք թագա-
ւորին ներկայանալու:

Թագաւորը զանի տեսածին պէս՝ իրեն
քաղաքին սովորութեանը հակառակ շքուած,
հասկցաւ որ օտարական մ'է, հարցուց ա-

նոր թէ ի՛նչ է իրեն ներկայանալուն պատ-
ճառը : Ազնիւ տղայն տարօրինակ անվա-
խուժեամբ պատասխանեց Նորին Աեհա-
փառութեան : — Տէ՛ր , հեռաւոր երկրէ այս
հռչակաւոր Թաժկասթ անուն քաղաքը յատ-
կապէս նշանաւոր գործի մը ձեռնամխելու
համար եկած եմ :

— Եւ ի՛նչ է ուրեմն , ըսաւ թագաւորը ,
— Ներուի ինձ խնդրել ձենէ՛ մտիկ ընել
ինձի , ես հրամանի տակ ծառայ մ'եմ , հա-
րուստ տէր մ'ունիմ , որ թագաւորի պէս
մարդ մ'է , այս հռչակաւոր անձը զիս իր
քովը կը ծառայեցնէ լոկ հանճարիս ու վար-
քիս համար , բայց հաւատացէք , տէ՛ր ար-
քայ , որ ասոնք անապարժելու համար չեմ
ըսեր , ամբողջ վեց ամիս է որ զիս կը փոր-
ձէ , և կուզէ որ իմ հանճարովս իր պա-
տիւր ընդարձակէ , նորանոր վտանգաւոր
գործեր կը յանձնէ ինձ . ոչոնցմէ մին ալ
ստիպեցուց զիս այս քաղաքը գալ , նպա-
տակս ձեր գերահանճար աղ ջիկը փորձել . . .

— Աղ ջիկս փորձել .

— Այո՛ , տէր արքայ , նպատակս աղ ջիկդ
փորձել է , և ասոր համար զրկուած եմ :

— Բայց տղա՛ս , կրնա՞ս ապահովցնել ինձի
թէ քու տէրդ նշանաւոր յիմար մը չէ .

— Տէր արքայ, ինքը իմ իմաստութեանս
ապաւինած է .

— Եւ դու կը յուսաս իմ աղջիկս փորձե-
լով յաղթել, որ ամբողջ տիեզերքը իր հան-
ճարովը զարմացուցած է. հաւատա՛, տղաս,
որ իմ աղջիկս հրաշայլիք մ'է, և քու ըրածդ
անխոհեմութիւնս. տես ո՛րչափ մեղմութեամբ
կը վարուիմ հետդ, շատերը այդ յիմարու-
թիւնն ունեցան, և ամենն ալ կորսուեցան,
անոնց հետ այսպէս չվարուեցայ, գիտցիր
որ քու ազնուութիւնդ դիս կամօք է . . . :

— Բայց կը ճանչնամք այս մատանին .

— Աստուած իմ, իմն էր այս, դոր եղբօրս
աղջկանը նուիրեցի, ըսէ՛ . ո՛ւսկէ այս քու
ձեռքդ անցաւ .

— Հիմայ ամեն ըսն պիտի լսես, տէ՛ր ար-
քայ, ասիկայ յաղթանակի մրցանակ մ'է,
դոր քու եղբօրդ աղջկանէն ընդունեցայ .

— Յաղթեցի՞ր զանի .

— Գեռ կը տարակուսիս .

— Ուրեմն դուն երկինքէն իջած մարդ մը
ես, որովհետեւ իմ եղբօրս աղջիկն ալ իմ
աղջկանս պէս անյաղթելի սեպուած էր, և
իրօք այնպէս էր, և ի՞նչպէս կըցար դուն
զանի յաղթել .

— Տէրոջը օժանդակութիւնովը .

— Իմաստուններուն իմաստունն ես դուն,
բայց այս պատիւը քեզի տալէս առաջ՝ զքեզ
իմ աղջկանս կը դրկեմ, եթէ նա ալ յաղ-
թեա, զաւակս ես, և հանճարոյ Սասունածը :

— Աամքդ ըլլայ, տէր արքայ :

Ազնիւ տղուն Թաժկարի թագաւորին աղջիկը
յադրելը :

Յաւարտ խօսակցութեան թագաւորը՝ հրա-
մայեց իր մանկյաւիկներուն զաղնիւ տղան
իւր աղջկանը ներկայացունել : Թագաւորին
աղջիկը փառաւոր և խիստ շքեղութեամբ
զարդարուած սենեկի մը մէջ ջութակահար
նաժիշտներու հետ կը զուարճանար, զաղնիւ
տղան տեսածին պէս, և իմանալով որ յատ-
կապէս իր հօրմէն զրկուած է, սենեկին մէջ
եղող բոլոր նաժիշտները դուրս հանեց, և
սկսաւ խօսիլ աղնիւ տղուն հետ : Տղուն
վրայի թագաւորական նշանը, մատանին թէև
օտարական մ'ըլլայր կը դուշակէր, զինքը
խել մը մտածութեանց մատնեցին, ի վերջոյ՝
լսելով իրմէ որ զինքը փորձով յաղթելու
եկած է, առանց անոր ս'լսել և ո՛վ ըլլա-
լը հարցունելու՝ հմայեց. և ամեն բան կըր-
ցաւ հասկնալ :

Յետոյ աղջիկը խել մը վիճարանութեամբ
աղնիւ տղուն հետ բանակուելէն վերջը ,
առաջարկութիւն մ'ըրաւ , որով անյաղթելի
ըլլալ կերագէր : Այսպէս ըսաւ , վաղուրնէ
սկսելով՝ երեք օր , երեք ժամ , առաւօտ-
եան Յէն մինչև Տը ինքզինքդ այս քաղա-
քին մէջ տեղ մը պահէ , անանկ տեղ մը ,
որ ինծմէ անծանօթ ըլլայ . եթէ ես գիտ-
նամ պահուրտած տեղդ , գիտ յաղթելու
փորձ փորձելուդ համար՝ զքեզ սպաննել
պիտի տամ , իսկ եթէ չկրնամ գիտնալ ,
յաղթուած ըլլամ , և ուզածդ քեզի տամ :

Աղնիւ տղան ասոր ակամայ հաճութիւն
տալով , դուրս ելաւ սենեկէն , և ապարան-
քէն ու խորին մտածութեանց ենթարկուել-
ով՝ պահուրտելու տեղ մը կը փնտռէր :

Հետեւեալ օրը դարձեալ այսպէս մտա-
ծութեամբ երթալու ատեն , Հրեայ մը դի-
մաւորեց , որ շրջիկ փերեզակ մ'էր , և ամեն
տեսակ մանր մունր կը ծախէր , որոնք յա-
ճախ պէտք կունեննան , մօտեցաւ հրեային ,
խօսեցաւ հետը , աղնիւ անձ մ'էր նա՛ , սի-
րով ընդունեցաւ տղայն , և ականջ դնելով
անոր խնդրանաց , որով նոյն օրը Յ ժամ
պահուրտելու տեղ մը կուզէր , իր տունը

ցուցուց, ազնիւ տղան շնորհակալ ըլլալով
Հրեային, գնաց անոր տունը, և մառանը
պահուըտեցաւ ճիշդ երեք ժամ:

Թագաւորին աղջիկը որ ամեն ինչ հմա-
յելով կրնար հասկնալ, շուտով մը տեղե-
կացաւ թէ՛ ազնիւ տղան Հրեայ փերեզակի
մը տանը մառանն է, և հանդարտեցաւ:

Ժամը ճիշդ վեցն էր, երբ տղան անկէ
ելլելով վաղեց եկաւ թագաւորին աղջկանը.
բայց ընթերցողը թո՛ղ մակաբերէ թէ՛ զար-
մանքը ո՛րչափ եղաւ, երբ ամեն բան ճշ-
դութեամբ պատմեց իրեն աղջիկը, և ինք-
նին կրսէր, արդեօք դէտ կամ լրտն՞ս մը
դրած էր ետևէս, բայց չկրնար ըլլալ որ
դէտը հետս Հրեային տունը մտած, և մա-
ռանը իջնելս տեսած ըլլայ, որովհետև ա-
ղէկ գիտեմ որ ետևէս ո՛չ ոք այն տունը
մտաւ:

Աղջիկը՝ հրամայեց որ դարձեալ երթայ
և երկրորդ փորձ մ՞ալ ընէ, ինչպէս որ ար-
դէն ալ ըսած էր թէ երեք օր միայն միջոց
տուած է:

Ազնիւ տղան զարմանքը չափաւորելով,
երբ քաղաքին մէջ փողոցէ փողոց կը պտը-
տէր, և երկրորդ օրն ալ պահուըտելու տեղ

մը կորունէր, դրինն ձկան փուշը միտքը ին-
չաւ, իսկոյն ծովեզրը վաղեց, և այն փուշը
քիչ մը կրակի վրայ հոն այրեց, անմիջապէս
ձուկը լողալով եկաւ, և հարցուց տղուն
թէ ի՞նչ կուզէ, ազնիւ տղան անոր աղա-
չեց և խնդրեց իրմէ որ իրեն 3 ժամու-
շափ պահուրտելու տեղ մը ցուցունէ, թա-
ղաւորին աղջկանը ամենատես աչքէն ծած-
կուելու համար: Զուկը գթալով տղուն վրայ,
հրամայեց որ իր բերանը մտնէ, և տղան
սարսափով հնազանդեցաւ ձկան, և 3 ժամ
ձկան բերանը կեցաւ. ինչպէս Նինուէաց-
ւոց քարոզիչ Յովնան մարգարէն կէտին փո-
րը. յետոյ ձուկը՝ երբ 3 ժամը լրացաւ,
զազնիւ տղայն ցամաքը հանեց:

Ազնիւ տղան կը կարծէր որ այս անգամ
յաջողած և յաղթութիւնը վաստկած էր,
ուստի սիրտ ի խինդ և ոստոստելով եկաւ
խմաստուն աղջկանը. բայց ի զո՛ւր, աղջիկը
այդ ալ կրցեր էր հմայելով տեսնել, և իր
նաժիշտներուն իսկ ցուցնել հայելոյն մէջ
որով կը կախարդէր:

Ազնիւ տղան այս անգամ յուսահատած
գարձաւ ետ, և չէր գիտեր թէ այս անգամ
ո՛ւր պահուրտի. այս մտատանջութեամբ

դնաց իջևանը, ճաշեց և քիչ մ'ալ քնացաւ,
արթընցաւ և տեսած երազները իրեն օգուտ
մը չէին հայթայթած, իրիկուն եղաւ, տըրտ-
մութիւնը երթալով կաճէր. որովհետև եր-
րորդ օրուան բան մը չմնաց, բայց յանկարծ
ձկան փուշին պէս միտքն ինկաւ կապկին
բուրդը, զոր հետևեալ օրը կանուխ ելլելով
առաւ, և լեռը ելաւ. հոն կրակի վրայ
ծխեց և կապիկը անմիջապէս արագաքայլ
հասաւ, կը հարցունէր թէ ի՞նչ բանի պէտք
ունի. տղան ինչ որ դիփինին ըսեր էր՝ ա-
նոր ալ պատմեց, և կապիկը զանի հան-
դարտեցուց թէ իրմով այս անգամ կը յա-
ջողի այն իմաստուն աղջիկը յաղթել:

Ազնիւ տղայն չէր դիտեր թէ ի՞նչպէս
չնորհակալ ըլլայ անկէ, որ զինքը մեռնե-
լու վտանգէն ազատելու և պատուով փա-
ռաւորելու խօսք կուտար:

Կապիկը հրամայեց ազնիւ տղուն՝ որ ե-
տևէն երթայ, և լեռանը մէջ քիչ մ'ատեն
ըջեւէն վերջը խոռոջաւոր ծառի մը քով
հասան, որուն առջև կանդ առաւ կապիկը
և զազնիւ տղայն անոր խոռոջին մէջ մըտ-
ցուց և ինքը առջին դուռ մը կը ձևացնէր:
Այն նեղ ու անհանգիստ տեղը ճիշդ 3

Ժամ կեցաւ ազնիւ տղայն . ինքիրեն կրտսէր .
« Այս ամենը իմ ձեռքովս ըրի , ահաւասիկ
ինձի համանման մը գտնելու փափաքին ար-
դիւնքը . բայց համբերեմ , թերևս վախճանը
անդորրութիւն ու երջանկութիւն ըլլայ » :
Քառնանք աղջկանը :

Թագաւորին տունը նաժիշտները իրար
անցած՝ աղջիկը մխիթարել կը ջանային , ու-
րովհետև այս երրորդ անգամին չէր յաջո-
ղէր , և արդէն ժամն ալ ճ ը դարկեր էր :
Աղջիկը խել մ'ատեն մտատանջ կեցութիւն
մ'անցընելէն ետև , ինքիրեն զուարթացաւ
և կուրախանար , կերևար թէ ինքնին գե-
ղեցիկ մխիթարութիւն մը գտաւ . այս միջո-
ցին ազնիւ տղան եկաւ հասաւ ապարանքը
և աղջկանը սենեկէն ներս մտաւ , յաղթը-
ւած աղջիկը զանի տեսածին պէս՝ ցատկեց
տեղէն և ազնիւ տղուն վիզը պլլուեցաւ ,
ըսելով իմաստունդ իմաստնոց , յաղթեցի՛ր
զիս , կը սիրեմ դքեզ , և կուզեմ քեզի ա-
մուսին ըլլալ , կաղաչեմ ընդունէ՛ զիս , հայրս
այս բանին պիտի հաւնի , և մենք երջանիկ
պիտի ըլլանք , և այն ատեն իրօք պարծե-
նաչու առիթ պիտի ունենամ իմաստու-
թեանս վրայ . որովհետև ամենէն դժուարին

բաներն ալ քու ընկերակցութեամբդ և Աստուծոյ օժանդակութեամբ պիտի կրնամ ի դլուխ հանել :

Ազնիւ տղան զինքը արժանի չէր սեպեր անանկ շնորհի մը՝ որ իրեն կառաջարկուէր, բայց ի վերջոյ՝ թագաւորին և իր մեծամեծաց աղաչանացն ու թախանձանացը դիմանելով, ընդունեցաւ այն առաջարկութիւնը, բայց միտքը դրած էր զանի իր տիրոջը ընծայ տանիլ, ըսելով թէ, ահաւասիկ քեզի արժանաւոր կին մը :

Թագաւորը ազնիւ տղային այս առերես սուցուցած հաւանութեան վրայ անչափ ուրախանալով, ուզեց որ քիչ ատենէն հարսանեաց հանդէսը կատարեն, բայց ազնիւ տղային աղաչմամբը ձգեց որ իր հայրենիքը երթայ նախ, և հոն անհրաժեշտ պարտաւորութիւն մը կատարելով հայրը ուրախացնէ :

Թագաւորին Աղջիկը՝ ազնիւ տղան դեռ ճամբայ չելած, բան մը խնդրեց անկէ. խիստ դժուարին բան մ'ըսաւ. եթէ ինքը կը սիրէ, երթայ երկու սրուակ կենաց ջուր բերէ : Ազնիւ տղան երբ լսեց այս անունը որ ոչ խմացած ոչ մտքէն անցած և ոչ իսկ

լաած ունէր, զարմացաւ և կը հարցունէր թէ ո՛ւր կրնայ գտնել զայն, բայց աղջիկը նոյնպէս ինքն ալ չէր գիտէր տեղը, միայն անունը լաած եմ ըսաւ, և կուզեմ անկէ քու ձեռքովդ գտնել տալ. որուն կզգամ թէ, շատ պէտք պիտի ունենանք :

Ազնիւ տղան երկար ատեն շուարած մնաց սիրուն աղջկանը այս պատասխանին վրայ, բայց վերջապէս Սատուծոյ օգնականութեանը վրայ ապահովելով, խօսք տուաւ որ գտնէ, ու անկէ երկու սրուակ իրեն բերէ : Երկրորդ օրը ազնիւ տղան արշալուսին ելաւ և լեռը վազեց, գրպանէն տուփ մը հանեց, որուն մէջ փետուր մը կար, զոր ատենօք ընթերցողը կը յիշէ թէ Անգղէն առած էր, իսկոյն ծխեց զայն, և յիշեալ Անգղը անմիջապէս իր դէմը տեսաւ, պատրաստ իր ամեն ուղածը ընելու : Ազնիւ տղան պատմեց անոր ինչ բանի համար զինքը կանչելը, առջի բերան Անգղը բաւական դժկամակութիւն ցուցուց, և կըսէր, խիտ դժուարին բան խնդրեցիր, ես 150 տարուան ծեր մ'եմ, և այդ խնդիրքդ կատարելու համար 40 օրուան ճամբորդութեան պէտք ունիմ. ո՛րչափ տառապանք ու դժ-

աւարութիւն կրելու է . բայց սիրոյդ հա-
մար ստիպուած եմ անկէ բերել, ահաւա-
սիկ ես կերթամ, դուն հոս քառասուն օր
սպասէ, եթէ այսչափ օրուան մէջ չդառ-
նամ, ետ դարձիր, որովհետեւ այն ատեն
մեռած պիտի ըլլամ . բայց եթէ ողջ մնա-
լու ըլլամ, ազատիմ այն խել մը վտանգներ-
րէն, մինչև քառասներորդ օրը կը դառնամ .
մնաս բարով, ալ երթամ ես, բայց, ազէ,
միտքս ինկաւ, այդ սրուակները ոտքերուս
կապէ . ազնիւ տղան Անդղին ուղածին պէս
կապելով, ճամբայ դրաւ զայն :

Քիչ մը վերջը Անգղը աներևութացաւ,
և ազնիւ տղան հոն կանցնէր իր օրերը մին-
չեւ ի վերադարձ Անգղին :

Ճիշդ քառասուն օր անցաւ և ազնիւ
տղան արդէն յուսահատելու վրայ էր, բայց
քառասուն և մէկերրորդ առաւօտուն վերա-
դարձաւ Անգղը . բերելով իր հետ երկու
սրուակ լեցուն կենաց ջուրէն, այս որ տե-
սաւ տղան, ուրախութենէն պիտի խելա-
գարէր, բայց Անգղը զանի հանդարտեցնե-
լով բաժնուեցաւ : Ազնիւ տղան ուրախու-
թեամբ սրտի երկու սրուակները առած
պալատը դարձաւ, բայց անոնցմէ մին դրժ-

բաղդարար ճամբան կոտրեցաւ : Երբ աղջիկը լսեց աղնիւ տղուն դալուստը իր նաժիշտներովը և թմբկահարներով ու նուագարանաց քաղցր երգերով, և թագաւորն ալ իր մեծամեծներով դիմաւորեց զանի, անմիջապէս մարդարտահիւս և ոսկեթել թիկնոց մը հագուցին անոր և ամեն ոք իրեն խոնարհութիւն կրնէր :

Քանի մ'օրէն աղնիւ տղան դառնալ ուզեց իր հայրենիքը, որուն համար արդէն թագաւորին հաճութիւնը առած էր. բայց աղջիկը մեծ սղբով ու լացերով շէր ուզեր բաժնուիլ աղնիւ տղէն, ուստի հայրը ստիպուեցաւ զանի ալ միատեղ ճամբայ դնել. քիչ միջոցէն ետքը նորէն տեսնուելու խոստմամբ :

Ազնիւ տղային թագաւոր ըլլալը :

Ազնիւ տղան և թագաւորին աղջիկը խել մը դօրաւոր և կարիճ ուղեկիցներով սկսան լեռան անցքերէն շարունակել իրենց ճամբանին :

Խիստ զուարճալի էին բոլոր դաշտերն անտառներն ու լեռները, որոնք վերստին կենդանացած՝ կանաչ դորդերու տակ կահերեւութանային, և դարնաղարդ առուակաց

յորդանոս անցքը՝ որ բոլոր վայրերը կուռ-
դէին յաճումն ծառոց և վայրենի վարդեն-
եաց : Արդէն բաւական միջոց առած էին ,
երբ թագաւորին աղջիկը ուզեց ճամբանին
շեղելով անգամ մ'ալ Թէլման հանդիպել ,
ուր կուզէր հօրեղբօր աղջիկը տեսնել , ու
անոր հետ անգամ մը խօսիլ բոլոր անցից
վրայ : Հաճեցաւ աղնիւ տղան աղջկանը կա-
մայ . և մտան Թէլման , ուր իրենց կամքը
կատարելէն անմիջապէս յետոյ՝ նորէն ճամ-
բայ ինկան , իրենց հետ առնելով նաև այն
աղջիկն իր հօրը հաճութեամբ :

Երկու օրէն ետքը ի մօտուստ տեսան
չքեղատեսիլ քաղաք մը , ուր թագաւոր կը
նստէր . հոն մտան , և ուղղակի թագաւորին
ներկայացան , որ զիրենք մեծ պատուով ու
մեծարանօք ընդունեց :

Սնպատակի եղաւ աղնիւ տղուն զար-
մանքը՝ երբ նոյն քաղաքին թագաւորը աե-
սաւ , որ այն Աոյր Գբնեցին էր , զոր ինքը
մահու վտանգէն ազատած , և աչքը բա-
ցած էր : Աոյր Գբնեցին ճանչցաւ իր աղա-
տարարը , համբուրեց անոր ճակատը , և խ-
կոյն անոր ծիրանի հագցնելով , և թագա-
ւորական թագ դնելով գլուխը , թագաւոր

հուշակեց բոլոր շրջակաները, պատմեց իր
հօրը մեռնիլը և զնա յաջորդելն, նաև ու-
զեց իմանալ ինչ որ ազնիւ տղային գլխէն
անցեր էին: Ամեն բան իրարու պարզեցին
երկու սիրայօղ մտերիմք, և ուրախութիւնը
նոյն վայրկենին սահմանէն անցած կերուար:

Ազնիւ տղան, այն մեծ շնորհին փոխա-
րէն, որ Գրնեցիէն ընդունեցաւ, թագա-
ւորին աղջկանը հօրեղբօր աղջիկը երկու
կողմէն մէկ հաճութեամբ, ամուսին տուաւ
Գրնեցիին. որով արենակցութեան կապ մ'ալ
հաստատուեցաւ իրենց մէջ:

Ութ օրէն նորէն ճամբայ ելան թագա-
ւորին հիւրերը. չմոռնալով քաղցր համբոյր-
ներու ներդաշնակութեամբ իրենց հրաժեշտի
ողջոյնը տալ թագաւորին ու իր նորապսակ
ամուսնոյն:

Վերադարձ ազնիւ տղուն

Քանի մ'ամիսէն վերջը հասան ազնիւ
տղային հօրը քաղաքին մօտ, հոն խումբը
կայնեցաւ, և ազնիւ տղան երկտողիւ մը
լաւ սեպեց իր վերադարձը գերւոյն, որ
խարդախութեամբ կը տիրէր, կանխապէս
իմացունել. ուստի երկտողիկ մը գրեց և
մէկու մը ձեռքով զրկեց գերւոյն. գերին

զայն կարդացածին պէս՝ շանթահար մնաց ,
որովհետև բնաւ յոյս չունէր ազնիւ տղուն
դառնալուն . յուսահատութիւնը զանի պա-
տեց , և ճար մը կը մտածէր , վերջապէս
սթափուելով՝ լաւ սեպեց պատասխանել
ազնիւ տղուն , շնորհաւորել իր թագաւո-
րութիւնը , և զինքը ընդունելու պատրաստ
ըլլալը իմացունել . բայց միւս կողմէն նորէն
իր դայեակին հետ խորհրդակցելով՝ զազնիւ
տղայն սպաննելու միջոց մը կը փնտռէր :

Ազնիւ տղան ընդունեցաւ հրաւիրագիրը ,
կարդաց զայն և գրութեան ուժը իր իմաս-
տութեամբն և թագաւորին աղջկանը թիւ-
թելովը կրցաւ հասկնալ , որ գերւոյն սրտին
կենդանի պատկերն էր . խորհրդակցեցան
իրարու հետ , թագաւորին աղջիկը կաղա-
չէր ազնիւ տղային , որ ա՛լ չծառայէ գեր-
ւոյն , ահաւասիկ դու ալ թագաւոր ես , ը-
սաւ . իշխան և հարուստ . և ինչո՞ւ դեռ
համբերել կուզես , ինքզինքդ չյայտնել ծնո-
ղացդ , և երջանիկ ըլլալ , հետեւաբար կը
խորհիս զիս ալ այն վատ գերւոյն ամուսին
տալ . ա՛հ , չպիտի կրնամ ընդունիլ այդ
առաջարկութիւնդ . ես քեզի կին պիտի ըլ-
լամ , երկուքնիս ալ իմաստուն ենք , և ի-

բարու վայելուչ. արդարութիւնն և իրա-
ւունքը թո՛ղ ա՛լ արթննան, և մեզի պատ-
րաստուած այն մեծ բարիքը վայելենք.

— Այո՛, պատասխանեց անիւ տղան, ա՛լ
չեմ ուզեր համբերել, ի դո՛ւր կը մտածեմ
դեռ անխոհեմութիւնը չթողուլ. պիտի յայտ-
նեմ ինքզինքս իմ սիրելի ծնողացս, որոնք
գիտեն և հաւատացած են թէ՛ այն վատ
ու չար գերին, իրենց բուն և հարազատ
զաւակն է. այո՛, ա՛լ չեմ համբերեր :

— Աւրեմն պիտի յայտնես ա՛լ ինքզինքդ՝
երկար տառապանքներէ վերջը, հանգիստը
վայելել և նորէն փառաւորուելու համար.
Ինչպէս մոխրոց մէջ ծածկուած կրակ մը կը
վերափայլի :

— Այո՛, այո՛, քաղաքը մտածիս պէս, հօրս
ու մօրս ներկայացածիս պէս . . .

— Ի՞նչ երջանկութիւն . . .

Երկրորդ օրը քաղաքը մտան թաղաւո-
րական շքեղ հանդիսով, բոլոր բնակիչները
խուռն բաղմութեամբ ժողովուած՝ տեսնել
կուգային նորապսակ թաղաւորը, որ իբրև
իրենց իշխանին որդւոյն գերին ճանչցուած
էր. գերին ալ զանոնք դիմաւորեց, և ա-
ռաջին անգամ տեսնելով հրապուրուեցաւ

Թագաւորին աղջկանէն , որուն չնաշխարհիկ տեսքը հաղարաւոր մարդիկ սքանչացուցած , և մեծ հռչակ հանած էր խել մը քաղաքներու մէջ :

Ազնիւ տղան իր տէրը տեսածին պէս , թագը գլխէն վար առաւ , և ծռեցաւ երկրորդագել խոնարհութեամբ անոր , բայց դերին չթողուց , և կեղծ սիրոյ արտայայտութիւններ կը ցուցունէր , համբուրեց ազնիւ տղուն ճակատը ; և երբ իրենց բնակարանը գացին զանի իր քովը նստեցունելով , կը պարծենար հանդիսականաց , ըսելով . ահաւասիկ դերի մը , որ թագաւոր եղաւ . այսպէս ահա՛ ընտրութեանս մէջ սխալած չեմ երբէք :


Թագաւորին աղջիկը մտքէն կըսէր , թիչ մ'ատեն մնաց , և պիտի հասկնաս թէ դերին ո՞վ է , իմ խօսեցեալս , թէ դուն :

Այսպէս ուրախութեամբ և զուարճութեամբ անցուցին ցերեկը :

Ազնիւ տղան շատ անգամ կուլար բայց ծածկարար , որովհետեւ խիստ կարօտցած իր ծնողքը . կուզէր նոյն վայրկենին անոնց գիրկը նետուիլ , համբոյրնին քաղել , սակայն ամեն բան կուզէր իր կարգին ձգել . ուստի լաւ սեպեց դեռ ծածկել ինքզինքը :

Ազնիւ տղուն ծնողքը երբոր իրենց կար-
ծեցեալ զաւակը առանձին գտան, ազաչե-
ցին որ ա՛լ իր գերւոյն ազատագիրը տա-
լով զանի տէր հրատարակէ, բայց գերին
զայրանալով պատասխանեց անոնց, ազա-
տութիւն գերւոյս, պիտի սպաննեմ զինքը
որ իր իմաստութեամբը զիս գերազանցել
կերագէ, մա՛հ կը վայելէ միայն անոր, որ
իր տէրոջը դէմ խարդախութիւն ու դա-
ւաճանութիւն կը խորհի. յետոյ աճապա-
րելով իր դայեակին վազեց նորէն, և զազ-
նիւ տղայն մէջտեղէն վերցնելու միջոց մը
կը փնտռէր: Դայեակը կը սրտապնդէր զգե-
րին, ըսելով թէ այդ հոգը ինձ թող, և
նոյն օրը հետեւեալ հնարքովը զազնիւ տը-
ղայն կորանցնելու փորձ մը փորձեց, որ թիչ
մնաց թէ յաջողէր:

Գնաց ազնիւ տղուն, խոնարհեցաւ դի-
մացը, և ըսաւ իրեն թէ, տէրդ կուզէ որ
իրեն համար զարդարուած ու պատրաս-
տուած բաղնիքը երթաս ի հանգիստ երկար
խոնջանացդ: Ազնիւ տղան անխորհուրդ կեր-
պով ընդունեցաւ տէրոջը կամքը, և փու-
թացաւ ու գնաց պատրաստուած բաղնիքը,
որ մօտ էր:



Բաղնիք մտածին պէս՝ բաղնեպանները
կնոջը տուած խոտը կրակարանի մէջ ծխե-
ցին, և աղնիւ տղան իսկոյն զգայազիրկ ին-
կաւ, այս որ տեսան բաղնեպանք, յուզ-
ուեցան. և իմաց տուին աղնիւ տղուն սպա-
սաւորաց ու բարեկամաց նորա անակնկալ
և յանկարծական մահը, բոլոր մարդիկ լալ
սկսան և բոլոր քաղաքը սուգ առաւ: Իշ-
խանացեալ գերին յայնչափս ուրախացաւ
այս գուժին վրայ, և ինքզինքը գաղտնապէս
մաշող այն մեծ հողէն ալ աղատած կը
կարծէր:

Թագաւորին աղջիկը այս գոյժը լսածին
պէս՝ հրամայեց որ մեռեալը չթաղեն, մին-
չեւ որ ինք անձամբ գալով, չտեսնէ իր սի-
րելին:

Թագաւորին աղջկանը կամքը կատարուե-
ցաւ, և մեռեալը մինչև անոր գալուստը
անթաղ պահեցին:

Սղջիկը կենաց ջուրը, որ հետը բերած
էր, առաւ ու բաղնիք եկաւ. և հրամայեց
ամենուն՝ մեռելին քովէն դուրս ելնել, և
երբ ինքզինքը առանձին մեռելին քով գը-
տաւ, կենաց ջրէն Յ կաթիլ վազցուց աղ-
նիւ տղուն բերանը, զոր կըլլածին պէս

արթնցաւ ու ելաւ նստաւ, ուրախութեամբ
ներս կանչեց աղջիկը այն ատեն բոլոր սպա-
սաւորները ու բարեկամները, որ մեծապէս
զարմանալով, զաղջիկը հրաշագործ աւերի-
մը վայելուչ յարգանքներով կը մեծարէին:

Այս միջոցին խրատեց աղջիկը զազնիւ
տղայն, որ ինքզինքն ա՛լ յայտնէ: Տղան
ցատկեց տեղէն, և անմիջապէս կառքեր
բերել տալով նստեցան և հօրը սուներ ու
ղևորեցան. տղան այս անգամ ծնողքը տե-
սածին պէս՝ համբերեց, և փարեցաւ անոնց
վիզը, յայտնեց ինքզինքը և պատմեց բոլոր
դժխէն անցածները, զոր ոչ նուազ արտասա-
ւօք մտիկ ըրին, և օրհնեցին զԱստուած, որ
վերջապէս իրենց ճշմարիտ զաւակն այն ա-
հրնկէց ու վտանգաւոր դէպքերէն ազատեց,
ողջամբ իրենց գիրկը դարձունելով: Այն
վայրկենին ճանչցուեցաւ վա՛տ գերւոյն ո՛վ
և ի՛նչ մարդ ըլլալը, և իրեն բոլոր խար-
դախութիւնները:

Ազնիւ տղան օրինաց համեմատ՝ պատ-
ժեց այն մարդկութեան և Աստուծոյ թշնա-
մին, որ աղէկութեան փոխարէն չարու-
թիւն ըրեր էր, և գերին ձիւ մը պոչէն
կրօպելով դաշտին մէջ ձին վազցնել տը-

լաւ, որով չարաչար սատկեցաւ վա՛տը :

Անվրդով և անքայտ խաղաղութիւնը՝ նորէն մտաւ ազնիւ ընտանեաց ժամանակէ մը հետէ յուզուած բնակարանէն ներս, և ըջանկութիւնը տիրապետեց :

Ազնիւ տղան ամուսնացաւ թագաւորին աղջկանը հետ, որով երկուզնին ալ իրենց ըղծիցը հասան, և անհուն խինդ ու հրրճուանք տեղի տուին :

Արդարութիւնը՝ աշտպէս ահա արթնցաւ, և ամեն բան պատշաճիւ տնօրինեց :

Աշտպէ՛ս նաև ամեն գործ ուչ կամ կանուխ կը վարձատրուի, բաւական է որ արդարութեան անհրաժեշտ գործադրութիւնը ազնիւ տղուն պէս զգանք, և զայն երկայն ժուժկալութեամբ սպասենք. որպէս զի ապագային երջանկութիւնը քաղցր և գովելի ըլլայ :

4682



1912
MAY 1912
MAY 1912

1912
MAY 1912
MAY 1912

50m

Map

By the way up

End

2353

f

00006742

2013



NL0006742

